



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

825

- 67

№

4

# ՐԵՎՈՍՈՒ

ԺԱՅՐ Ա. Մ. ԱԲՐԱՄՅԱՆ



Պատմութեան  
ՏՈԽ SOLUM ARMENI



Կայսր Առաջ Ամերիկայի

18

80

0044

30 MAY 2011

«ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐՔՆ ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ»

82-5

F-67

ԲԻԶԵՐ ԱՏՈՓԻ



ԱՎՄԱՍ ԵՂԲՈՌ

ՏՆԱԿԼ

ՓՈԽ. Տ. ՊԱԼՄԵՐԻ

Թարգ. Օր. Կ. Տէր-Մարկոսեանցի:



ԹԻՖԼԻՍ

Յովհաննէս Մարտիրոսեանցի Տպարանում:

1880

## Ա. ՌԱԶԻՆ Ա. ՌԱԴԻՍ



որ, նոր հասկաւ, գոշեց մի տասնամեայ  
տղայ, արագութեամբ բաց անելով ման-  
կանոցի դուռը, որտեղ նստած էին նրանից  
մի փոքր աւելի հասակաւոր աղջիկներ և  
պարապում էին դասերով։

— Լոի՛ր, Եդուարդ, ասաց Սօֆիան,  
աչքերը չբարձրացնելով տետրակից, — եթէ  
դու այսօր էլ գալիս ես մեր պարապմունքը  
խանգարելու....

— Ու պատմելու քո զանազան անտեղի չարութիւնների մասին,  
կտրեց Սօֆիայի խօսքը Հեղինէն, — ես քեզ առաջուց ասում եմ,  
որ ստիպուած կլինենք գանգատուել մեր մօրը։

— Անպատճառ, վըաբերեց Սօֆիան, երեսը դէպի Եդուարդը  
դարձնելով։

— Բաւակա՞ն է, մոռացէք, խնդրեմ, իմ առաջուայ յիմարութիւնները. ես հիմայ եկել եմ ձեզ մի հետաքրքիր լուր յայտնելու:

— Իրա՞ւ, հարցրեց Սօվիան հետաքրքրութիւնը շարժուած:

— Եւ որի համար, ես համոզուած եմ, դուք երկուսդ էլ շնորհակալ կ'լինէք ինձանից. յայտնելու լուրս «Թովմաս» եղօր տնակին մասին է:

— Թովմաս եղօր տնակի մասի՞ն, ուրախաձայն բացականչեցին աղջիկները միաբերան:

— Այս', մայրիկն ասաց ինձ, որ ստացել է վերջապէս այն գեղեցիկ գիրքը, որի մասին ամենքն այնքան խօսում են և որը ամենքը կամենում են կարդալ:

— Այսպիսի ուրախալի լուր յայտնելու համար դու արժանի ես, որ մենք երկուսս ել համբուրենք քեզ, ասացին քոյրերը միաձայն:

Այդ միջոցին մտաւ մանկանոցը տիկին Պալմէրը:

— Շատ լաւ, որդիք, ես շատ ուրախ եմ, որ միշտ սիրով էք միմեանց հետ վարվում:

— Մայրիկ, եղուարդը մեզ ասաց, որ դուք ստացել էք «Թովմաս» եղօր տնակ վերնագրով գիրքը, որը շարադրել է տիկին Ստու:

— Այս', որդիք, և բերել եմ ձեզ մօտ, որ խսկոյն սկսենք կարդալ: Առաջպէտք է կարդանք այն նամակը, որ այն խելօք և բարի կինը իւր ձեռքով գրել է Անդիսայի և Ամերիկայի մանուկներին:

— Ո՛չ, կարդացէք այն նամակը, սիրելի մայրիկ, աղաղակեցին եղուարդն և երկու քոյրերը միասին:

Ահա նամակը՝

«Այրելի մանուկներ Անդիսայի և Ամերիկայի, իմ լաւ բարեկամներիցս մէկը շարադրեց ձեր մանուկ հասակի համար «Թովմաս

եղօր տնակը» վերնագրով գիրքը և ինձ խնդրեց, որ մի քանի խօսք ասեմ իրեւ յառաջաբան այս գրքի մասին:

«Աշխատեմ պատմել ձեզ, թէ ինչ կերպով լոյս տեսաւ այս գիրքը:

«Շատ առաջ, երբ գեռ մի խօսք անդամ չէր գրուած «Թովմաս» եղօր տնակի» մասին, այդ անցքը պատմել էին մի խումբ երեխաների, յետոյ այդ բերանացի պատմութիւնը հեղինակը գրել էր թղթի վերա: Դորա համար «Թովմաս» եղօր տնակը» իրաւամբ մանուկներին է պատկանում:

«Փոքրիկ Եւային քրիստոնեայ աղջկայ պատկեր եմներկայացրել օրինակ արէք նորանից կարեկից լինել ձեր մերձաւորներին, առաւել ևս թշուառներին ու չքաւորներին. սովորեցէք նորանից խօսել ամենի հետ հեղութեամբ. բարութիւն արէք, որչափ ներում են ձեր ոյժերը: Եւան ձեզ շատ բարի ու սիրելի կերեայ, բայց կար երբեմն մի երեխայ, որը սրանից էլ բարի էր. նա մեր Փրկին էր, որին մենք պաշտուս ենք և որը երեխայի նման պարզ ու անարատ սիրտ ունէր: Նա այժմ նատած է Հօր Աստուծոյ աջ կողմը և միշտ միտն է բերում, որ ինքն էլ երբեմն մանուկ էր և որ հասակ առած ժամանակ ասում էր. «Մի՛ արգելէք երեխաներին գալ ինձ մօտ, որովհետեւ այդպիսիներին է երկնքի արքայութիւնը» Տա՛յ Աստուած, որ դուք էլ նորա սէրից և խրատներից խրախուսուած, լինէք բարի, հեզ և մաքուր:

— Ո՛չ, սիրելի մայրիկ, մանուկների մասին այնքան բան է ասուած, որ մեր հետաքրքրութիւնը աւելի շարժվում է և ուզում ենք, որքան կարելի է շուտ կարդալ այդ գիրքը:

ՏԻԿԻՆ ՊԱԼՄԵՐ. Կարդալուցս առաջ ես մի քանի խօսք կասեմ

Ամերիկայի մասին, ուր պատահում է այս անցքը: Ամերիկան գտաւ Քրիստովոր Կոլումբոսը 1492 թուականին Խղարելլա թագուհու օդնութեամբ, որը համոզեց իւր ամուսին Ֆրիդրիկոսին օգնել յիշեալ հոչակաւոր ծովագնացին: 1497 թուականին Փլորենտինացի Ամերիկօ Վեսպուչին գնաց այդ նոր գտած երկիրը և պնդում էր, որ ինքը գտաւ, և իւր անունով կոչեց այդ հարուստ աշխարհի մի մասը Արեելեան Հնդկաստան կամ Վեստինդիա: Կենտուկկին, ուր մեր պատմութեան սկզբում գտնում ենք Թովմասին, մի նահանգ է, որ կախումն ունի Վիրգինիա գաւառից և արևմտեան կողմից սահմանափակուած է Օհիօ գետով: Կանադա, որի մասին նոյնպէս կ'յիշուի, հիւսիսային՝ կողմում մի ընդարձակ երկիր է: Նորա գտնուելուց հարիւր տարի յետոյ, Ֆրանսիացիք սկսեցին գաղթել այնտեղ մշտական բնակութեան համար: Հենրիկոս IV մեծը այնտեղ գաղթականներ ուղարկեց: 1763 թուականին եղած գաշնադրութիւնից յետոյ Կանադան Անգլիային տրուեցաւ: Սրանից յետոյ սկսում եմ «Թովմաս եղբօր տնակա-ի պատմութիւնը»:



1 Կենտուկկի, 2 Վերբինիա, 3 Օհիօ, 4 Կանադա, 5 Միսիսիպի, 6 Առլանտիկան ովկիանոս, 7 Մեքսիկայի ծոց, 8 Մեծ ովկիանոս, 9 Կոլումբոս, 10 Միսսուրի, 11 Վերմոնտ, 12 Նոր Օրլեան:

## ԹՈՎՄԱՍ ԵՂԲՈՐ

### ՏՆԱԿԱ



ովմաս եղբայրը բնակվում էր Կենտուկկիի մէջ: Նորա տէրը՝ Շելբին, շատ աղնիւ մարդ էր. բայց վերջը, ինչպէս կտեսնէք, շատ պարտքերի պատճառով ստիպվում է ծախել Թովմասին պարտքերը վճարելու համար: Ահա Թովմաս եղբօր տնակը: Սա մի փոքր փայտեայ շինութիւն է:

**Մ**տնենք ներսը: Նորա կին Քլոյէն ընթրիք է պատրաստում բարի Թովմասի համար. Գլուխը փաթաթած ունի լայն ու նախշուն թաշկինակով, որի տակից պսպղում է նորա կոլոր դէմքը, որ կարելի է կարծել թէ նա երեսին էլ իւր կարկանդակի նման ձուի սպիտակուց է քսել: Նորա փայլուն և ուրախ դէմքի վերայ երբեմն երբեմն պարծենկոտութիւն է նշմարվում, որ բնական է մի կնոջ, որ մի քանի վերստ հեռու տեղերում հոչակաւոր խոհարար էր համարվում:

**Տ**նակի մի անկիւնում, վառարանի դիմացը, դրած էր մի ծուռը

սեղան, որի վերայ գոյնզգոյն ամաններ էին շարուած ընթրիքի համար: Աեղանի մօտ նստած է Թովմաս եղբայրը՝ մեր պատմութեան հերոսը ու պարոն Շելքիի ամենալաւ բաննորը:

Թովմաս եղբայրը բարձրահասակ տղամարդ է, կարիճ, լայն կուրծքով: Նորա դէմքը սև է ու փայլուն, նորա կոլոր ու ազդու երեսի գծագրութիւնը վկայում է նորա հաստատ բնաւորութիւնը, բարեսրտութիւնն ու առողջ խելքը:

Վայեցէք, որպիսի ուշադրութեամբ սեղանի մօտը նստած, քարետախտակը առաջը դրած, աշխատում է տառերի ձեռքը զրել նորա մօտ կանգնած է իր տիրոջ որդին, որը հազիւ 13 տարեկան էր և ուղղում էր նորա սխաները: — Այդպէս չէ, Թովմաս եղբայր, ասում էր շտապով տղան, տեսնելով, որ իւր ծեր աշակերտը ց տառի պոչը հակառակ կողմն է գրում, — դու ց տառի տեղ զ ես գրում:

Յարգանքով ընդունելով իւր երիտասարդ ուսուցչի նկատողութիւնները, Թովմասը մի քանի ց և զ տառերի օրինակներ գրեց նորա համար: Նա հասկացու այս երկու տառերի մէջ եղած զանազանութիւնը, և իւր կոշտ ձեռքերով վերցնելով քարեգրիչը, շարունակեց գրել, ու մի քանի ց տառ գծագրելուց յետոյ ուրախութեամբ գոչեց.

— Պարոն Գէորգ, ես լաւ գրեցի, այնպէս չէ:

— Ո՞է, Քլոյէ, ես քաղցեցայ, — շուտով կեփուի կարկանդակը:

— Կեփուի՞ դեռ ո՞չ, պարոն Գէորգ, դեռ նոր է սկսում կարմիել Վերջապէս Գէորգը նստեց Թովմաս եղօր հետ ընթրիք անելու: Յետոյ Քլոյէն բաւական կարկանդակներ եփելուց և դեղեցիկ սիւնի նման գարսելուց յետոյ՝ նստեցրեց իւր ծնկների վերայ իւր փոքրիկ աղջկան, որ դեռ խանձարուրի մէջն էր, ու սկսեց

նորա բերանը կարկանդակներ կոխել իսկ յետոյ իրան էլ չմոռացաւ: Այդ ժամանակ միւս երկու եղբայրները, Պետրոսն ու Մովսէսը, թաւալվում էին սեղանի տակ իրանց բաժին կարկանդակը ձեռքերին, միմեանց կը մոռում էին, և երբեմն փոքրիկ քրոջ ոտքերիցը ծածուկ քաշքշում էին: Երբ ընթրիքը վերջացրին, Թովմասը նստեցրեց իւր ուսի վերա փոքրիկ աղջկան ու սկսեց թռչկոտալ: Գէորգն էլ թաշկինակը ձեռքին խաղացնում էր, իսկ Պետրոսն ու Մովսէսը, սըրանց շուրջը թռչկոտելով մրժմրժում էին արջի քոթոթների նման: Այսպէս շարունակում էին խաղալ, մինչև որ ամենքը լաւ յոգնեցան:

— Գլուխս տռաքում է ձեր աղաղակից, ասաց Քլոյէն. — Կարծեմ վերջացրիք արդէն ձեր կատակները, որովհետեւ այսօր մենք ժողովունենք: \*) Հազիւ թէ վերջին խօսերը ասաց Քլոյէն և ահա մտան տնակը Շելքիի գերիները՝ ծերեր, պատանիներ, հասակաւոր ու երիտասարդ կանայք և աղջիկներ: Նոքա առաջ աղօթք արին, յետոյ երգեցին, որովհետեւ նեղըները երաժշտութիւն շատ են սիրում և իրանց շարադրած երգերն ունեն, որոնց շարականների ձեւ էին տուել: Նրանք երգում էին «Նրկնային նրուսաղէմի» վրայ և ազատութեան միակ երկրի՝ Քանանացոց երկրի մասին, որտեղ մըտնելը իւրաքանչեւր նեղըն ջերմ փափագն է: Նոքա այս շարականները անկեղծ սրտով էին երգում: Մի քանիսը ուրախութիւնից լաց էին լինում, միւսները ծիծաղում ու միմեանց ձեռքերը սեղմում էին:

Երդերից ու աղօթքներից յետոյ նեղըները հաւաքուեցան Գէոր-

\*) Թովմասի տանը շաբաթը մի անգամ ժողով էր լինում:

գը շուրջը և խնդրեցին նորան, որ մի փոքր ժամանակ էլ մնայ իրանց մատ ու մի բան կարդայ: Գէորգը կարդաց Յայտնութեան գրքի վերջին գլուխը: Գէորգը որ իւր մօրից խելացի ու լաւ կրթութիւն էր սոսացել մանաւանդ կրօնի մէջ, նրանց չհասկացած տեղերը բացատրում էր: Նորա մեկնութիւններով բոլոր ունկնդիրները շատ զոհ մնացին, ասելով. «Իրաւ, զարմանալի պարզ է բացատրում Գէորգը. քարոզիչն անգամ նորա նման չէր կարող մեկնութիւն տալ» Յետոյ Թովմաս եղբայրը մի քանի աղօթքներ կարդաց պերին աստիճանի լաւ», ինչպէս նեգրներից մէկն ասաց, որովհետեւ Աստուծոյ փառաբանելու ժամանակ նորա հոգին լցում էր մի առանձին զգացմունքով:

Երբ Թովմասը կարդում էր աղօթքներ, նեգրներից մի քանիսը երբեմն ձայնակից էին լինում նորան, որովհետեւ կրօնի վերաբերութեամբ նորան պատրիարք էին համարում: Այս ժողովները շարունակվում էին մինչև կէս գիշերը: Վերջապէս ցրուեցան ամենքը և իւրաքանչիւր նեգր քաշուեց իւր խրձիթը: Թովմաս եղբայրը նըրանց գնալուց յետոյ տակաւին կարդում էր Սուրբ գիրքը և նորա մօտ նստած էին Քլոյէն ու երեխաները: Յանկարծ մէկը թիվթխկացրեց նրանց պատուհանը: Այս թիվոցը լսածին պէս, ամենքը շփոթուած վերթուան և վաղեցին դուռը բանալու: Բաղլսողը տիկին Շելքի աղախինն էր, որը, դուռը բանալուն պէս, մտաւ տնակը իւր փոքրիկ ու գեղեցիկ Հինրիկոսը ձեռքին:

— Ո՞չ է պատահել, ելիդա, հարցրին Թովմասն ու Քլոյէն միասին:

— Այն է պատահել, սիրելի Քլոյէ ու Թովմաս եղբայր, որ ես ուզում եմ փախչել և տանել հետո երեխայիս, որովհետեւ մեր տէրը ծախել է նորան:

— Ծախել է, կրկնեցին ծերունիսերը, ձեռքները դէպի երկինքը պարզելով:

— Այս, ծախել է, պատասխանեց Ելիզան: — Այս իրիկուն ես տիկնոջ սենեակի գռնով մոայ առանձնասանեակը և լսեցի ինչպէս պարոնը ասում էր տիկնոջը, որ Հենրիկոսին ծախել է գերեվաճառի վերայ և քեզ էլ նոյնպէս, Թովմաս եղբայր: Այս վերջին խօսքերը որ լսեց Թովմասը, սարսափեց, ձեռքերը դէպի երկինքը պարզեց, և ապշած ցաւալի կերպով այս և այն կողմն էր նայում, և երբ Ելիզան վերջացրեց խօսքը, ընկաւ բազկաթոռի վերայ, գլուխը կախ զցեց, ու այնպէս անշարժ մնաց երկար ժամանակ: — Ո՞վ է իմանում, ո՞ւմ իշխանութեան ներքոյ պէտք է լինեմ, ո՞ր անողորմ տիրոջ ձեռքն ընկնեմ: Պէտք է հեռանամ, գուցէ մինչեւ յաւիտեան զըկուեմ կնոջեցս ու որդկերանցիցս, ասում էր Թովմասը:

Թէպէտ Քլոյէն և Ելիզան շատ աշխատեցին համողել նորան, որ փախչի, բայց նա պատասխանեց, որ չէ ուզում խաբել իւր տիրոջը, որին միշտ հաւատարիմ է մնացել:

— Ո՛չ, ասաց նա, ես տեղեցս չեմ շարժուի, իմ տէրը ինձ միշտ իւր հողի վերայ կ'գտնի:

Ազնիւ Թովմասը լսւ գիտէր, որ եթէ ինքը, որ բոլոր նեգրներից թանկագինն էր, չ'ծախուի, այն ժամանակ, պարոն Շելքին ստիպուած կլնի բոլոր միւս նեգրներից զըկուել, և այդ պատճառով նա վճռեց տիրոջը ոչինչ վնասի չենթարկել իւր աղատութեան համար:

Այժմ մի քանի խօսք ասենք Ելիզայի մասին: Պարոնի և տիկնոջ մէջ եղած խօսակցութեան միւս օրը նա պիտի զըկուէր իւր միակ որդի Հենրիկոսից և նորան գերեվաճառի ձեռքը զցէր: Հենրիկոսը չորս տարեկան էր և մինչև այն օրը դեռ մի ժամ անգամ

չէր հեռացել իւր մօրից: Խնչպէս կարող էր խեղճ մայրը համաձայնուել այդպիսի անխիղճ յափշտակութեան հետ. այժմ մահը աւելի քաղցր էր նորա համար: Այդ պատճառով նա վճռ եց փախչել իւր որդու հետ դէպի ազատ նահանգները, այսինքն Ամերիկայի այն մասը, ուր գերիներ չկան, իսկ այնուեղց Կանադա գնալ, որտեղ ինքն էլ և երեսան էլ ազատ կլինեն: Այս մտադրութեամբ նա մօտեցաւ Հինրիկոսի մահճակալին: Մանուկը քնած էր խաղաղ քնով. նորա մազերը երկայն զանգուրներով պատում էին նորա անմեղ դէմքը, վարդագոյն շրթունքները կիսաբաց՝ երբեմն երբեմն ժպտում էին, մանր ու փափլեկ ձեռքերը տարածված էին վերմակի վերայ:

— «Թշուառ մանուկ, հառաշեց ելիզան, քեզ ծախել են, բայց մայրդ կազատէ քեզ:» Եւ երեխային կամաց զարթեցնելով, շտապով հաջրեց և վաղեց դէպի թովմաս եղօր տնակը:

— Մայրիկ, ո՞ւր ես գնում, հարցրեց մանուկը:

Մայրը պատասխանեց.—Սուս, Հենրիկոս, կամաց խօսիր. անպիտան մարդը եկել է և ուզում է Հենրիկոսին մօրից բաժանել բայց մայրդ չէ կամենում և փախչում է Հինրիկոսի հետ, որ անպիտան մարդը չ'առանէ նորան:

— Իսկ այժմ, ասաց ելիզան դռների մօտ կանգառնելով, — այսօր Ճաշեց յետոյ տեսայ իմ ամուսնուն, բայց այն ժամանակ դեռ ես ոչինչ չէի իմացել. նա գանգատվում էր, որ իւր տէրը շատ անողորմ է վարվում իւր հետ, այնպէս որ, մտադիր է փախչել նորա մօտից: Աշխատեցէք, եթէ կարելի է, իմաց տալ նորան, որ ես հեռացայ տիրոջից և ինչ պատճառով: Ասացէք նորան, որ մտադիր եմ կանադա գնալ: Բարեկցէք նորան իմ կողմից և ասացէք, — այստեղ նա մի ըուպէ կանգ առաւ և յետոյ այլայլուած սրտով շարունակեց: —

ասացէք, որ միշտ բարի լինի, որքան կարող է, որ կարողանանք պատահել իրար այնտեղ՝ երկնքում:

— Այսօր մենք այստեղ կ'կանգնենք, սիրելի որդիք, ասաց տիկին Պալմէրը զիրքը ծածկելով:

— Այս, մայրիկ, մենք ամենահետաքրիր տեղն ենք կանգ առնում, ասաց հոգոց հանելով Սօֆիան:

— Ա աղը մենք էլի կ'կարդանք մեր այս պատմութիւնը, ասաց Ժպտալով տիկին Պալմէրը, և այսպէս ամենայն օր կ'շարունակենք, մինչեւ որ վերջացնենք:

— Ա ինչքան հետաքրիր է լսել այդ պատմութիւնը, մայրիկ, աղաղակեցին երեխաները միաբերան, թուշկոտելով ուրախութիւնից:



ԵՐԿՐՈՐԴ ԱՌԱԽՈՑ

ՄԱՅՐԸ ԵՒ ԳԵՐԵՎԱ ԱՃԱՌԸ



ԻԿԻՆ ՊԱԼՄԵՐ, ԵՐԵԿ, ՍԻՐԵԼՔ ՈՐԴԻՔ, ԱՆՔ  
ԿԱՆԳՆԵցանք այնտեղ ուր Էլիզան փախաւ  
Թովմաս եղքօր տնակից գերեվաճառից  
ազատուելու համար, որը նորան իւր  
փոքրիկ ՀԵՆՐԻԿԻՍԻ հետ գնել էր պարոն  
ՆԵԼՔԻՒՅ:

ԱՅդ միջոցին գերեվաճառը, ահազին կօշիկները հադած, մեծ  
մեծ քայլերով մտաւ ՆԵԼՔԻՒ հիւրասենեակը և ամենաանբաւական  
ու կոպիտ ձայնով ասաց. — պարոն, ձեզ մի անհաճոյ լուր եմ յայտ-  
նելու. ձեր աղախնին էլ և աղային էլ սատանան տարել է:

— Պարոն ՀԵԼՔ, դուք մոռանում էք, որ կինս այստեղ է,  
ասաց սառնութեամբ պ. ՆԵԼՔԻՆ:

— Այս, ներկցէք, տիկին, ասաց ՀԵԼՔԻՆ խոժոռ գեմքով ու թե-  
թե զլուխ տալով. — բայց գարձեալ կրկնում եմ, որ կարգից դուրս  
բան է այս:

— Կատեցէք, պարոն, ասաց ՆԵԼՔԻՆ:  
— Ես ամենեին չեմ սպասում, որ մի այդպիսի կատակ կ' իսա-  
ղան ինձ հետ, մրմնջաց ինքն իրան ՀԵԼՔԻՆ:

— Ի՞նչ, պարոն, ասաց ՆԵԼՔԻՆ արագութեամբ շուռ գալով  
գէպի նա, — ի՞նչ էք ուղում դուրանով ասել իմացէք, պարոն, որ  
պատուիս դիպչողին ես ուրիշ կերպ կ' պատասխանեմ:

Այս սպասնալիքը երբ լսեց ՀԵԼՔԻՆ, փոխեց իւր խօսակցութեան  
ձեր և հանդարտ ու քաղցրութեամբ սկսեց գանգատուել:

— Այսուամենայնիւ, զարձեալ կասեմ, որ այսպէս պէտք չէր  
խարել ինձպէս բարի մարդուն:

— Ես համաձայն եմ ձեզ հետ, որ իսկապէս ախորժելի լուր  
չէ ոյդ, և եթէ ձեր նեղանալը փոքր իշատէ իրաւացի չ' լինէր, ձեր  
այդ կոշտ ու կոպիտ վարմունքը չէր ներուի. միւնցն ժամանակ չափից  
անցնել պէտք չէ. ես ձեզ նախազգուշացնում եմ, որ իմ հաւատար-  
մութեանս վերայ կասկածողին չէմ ների: Ես ինձ պարտաւոր եմ  
համարում օգնել ձեզ. վերցրէք ծառաներս, ձիաներս և ամեն ինչ,  
որ կարող է ձեզ պէտք դալ: — Վերջապէս, ՀԵԼՔ, շարունակեց ՆԵԼՔԻՆ  
այժմ իւր սովորական ուրախ ձեռով, կարծեմ, ձեզ մնում է միայն  
մեզ հետ քաղցրութեամբ նախաճաշիկ անել իսկ այնուհետեւ կը  
մտածինք, թէ ինչ պէտք է անել:

Այդ ժամանակ տիկին ՆԵԼՔԻՆ դուրս գնաց սենեակից, իւր  
տնտեսութեան զբաղմունքները պատճառ բերելով, և նորանց համար  
խառնածին աղախնի ձեռքով սուրճ ուղարկեց:

— Երեսում է, պատուելի տանտիկոջը ախորժելի չէ ձեր խո-  
նարհ ծառան, ասաց ՀԵԼՔԻՆ, աշխատելով ուղքան կարելի է ընտանե-  
րար խօսել:

—Ես սովոր չեմ, որ կնոջա մասին այսպէս խօսեն, նկատեց սառն կերպով Նելքին:

—Ներեցէք, ներեցէք, Նելքի, ես միայն հանաք էի ուղում անել ասաց Հելին ակամայ ծիծաղելով:

—Ամեն հանաք դուրեկան չէ, պատասխանեց Նելքին:

—Նայեցէք, խնդրեմ, ինչ փոփոխութիւն է երկուայ և այսօրուայ մէջ, ասում էր ինքն իրան Հելին.—ինչպէս հպարտացաւ և գոռողացաւ Նելքին՝ պարտամուրհակները ոչնչացնելուց յետոյ: Ո՞րտեղից է այսքան մեծամասութիւնը, ծիծաղելի է, ձշմարիտ, շատ ծիծաղելի:

—Ելեզայի փախուստը Նելքիի ագարակի գերիներին մեծ խռովութեան մէջ ձգեց. նոքա ամենքը այս կողմն այն կողմն ընկած, վազվզում էին ու աղաղակում: Խւրաքանչիւրնեզր ուղում էր ցոյց տալ թէ կամենում է բարեկամարար օգնել Հելին. այն ինչ՝ իւրեանց մէջ ծածուկ խօսք էին կապել որ որքան կարող են, ուշացնեն գերեվաճառի ճանապարհ ընկնելը: Ահա ինչ էր ասում նեղրներից մէկը իւր ընկերոջը, որը նոյնպէս պէտք է ուղեկցէր Հելին:

—Լսի՛ր, Անդրէաս, շատ պարզ է, որ տիկինը ուղում է ուշացնել բանը. Լսի՛ր, Անդրէաս, աւելացրեց նա աւելի բարձր ձայնով, կարծես ինքն իրան պարծենալով իւր սրամառութեան վերայ, —յայտնի բան է, որ տիրուհին չէ ուղում նրանց գանուելը: Թող ձիաները վազվեն որ կողմ կամենան՝ աջ թէ ձախ, դաշտերով թէ անտառներով, ես նորանց չեմ խանդարի, իսկ պարոնը անկասկած, պէտք է սպասէ, մինչեւ որ այս ամենը վերջանայ, այնպէս չէ:

Անդրէասը ժպտաց:

—Լսիր, Անդրէաս, մենք այնպէս ենք սարքել իր թէ Հելին աքացի է տալիս, Այո, նա աքացի է տալիս....Այն ժամանակ

բաց թողնենք միւս զոյդ ձիաները իրրել թէ նոցա օգնութեան համար, կրկնեց ծիծաղելով Սամուելը: —Իրաւ, շատ լաւ օգնութիւն կ'լինի, այնպէս չէ, Անդրէաս....

—Եւ այսպէս երկու նեղրները՝ Սամուելն ու Անդրէասը գլուխները թեք բռնած, չիրթիք էին տալիս, պարում, թռչկոտում և ուրախութեան աղաղակներ էին արձակում, թէպէտ և այսպիսի ժամանակ անտեղի էր այդքան ծիծաղը: Այս ուրախութեան միջոցին Հելին մի քանի գաւաթ սուրճ խմելուց յետոյ, զուրս եկաւ պատշգամբի վերայ, բոլորովին հանգստացած և ուրախ ուրախ խօսելով Նելքիի հետ: Սամուելն ու Մովսէսը նորան տեսան թէ չէ, արմաւենի տերեւներից հիւսած գլխարկներ դրեցին զլիներին ու խսկոյն գնացին ձիու ասպանդակներու մօտ կանգնեցան, որ հարկաւոր եղած ժամանակը օգնեն Հելին:

—Տղա՛ք, Ճանապարհ ընկնենք, գոչեց Հելին,—առանց ուշանալու:

—Մի րոպէ անգամ չենք կորցնի, պարոն, ասաց Սամուելը, մի ձեռքով ասպանդակը, իսկ միւս ձեռքով ձիու սանձը Հելիի ձեռքը տալով: Անդրէասը այդ միջոցին կամաց կամաց յետ էր անում միւս երկու ձիաների փորակապները:

Հելին հազիւ թէ հեծաւ ձիու վերայ, ձին վեր վեր ցատքեց ու Հելին տաս քայլ հեռու ձգեց փափուկ խոտերի վերայ: Սամուելը վրայ հասաւ, աղաղակելով ու հայհոյելով, և բռնեց ձիու սանձից, բայց ձին նորա այլանդակ զլխարկից աւելի խրսնեցաւ, վայր գլորեց նեղրին ու կատաղաբար խրինջալով դէպի դաշտը վազեց:

Անդրէասն էլ այդ միջոցին, ինչպէս որ պայման էին զրել, միւս երկու ձիաների կապերը արձակեց, որոնք նոյնպէս գլուխներն



առած, Հելիի ձիու ետևից վաղեցին: Մեծ աղմուկ ու շփոթ բարձրացաւ: Սամուէլն ու Անդրէասը աղաղակելով այս և այն կողմն էին վաղում և իրանց խիստ բարկացած էին ձեւացնում: Ամեն կողմից շների հաջոց էր լսվում. բոլոր նեգրները, այր և կին, վաղվզում էին, թաշկոտում, ոտքերով թիկթիկայնում ու ծափահարում էին ուրախութիւնից: Միւս կողմից Հելին խելադարին ման, այս և այն կողմն էր ընկնում, յիշոյներ էր տալիս, ոտքերը խփում էր գետնին, գոռում էր, բայց իզուր էր նրա բոլոր ջանքը: Պարոն Շելքին էլ պատշգամի վերայ կանգնած՝ հրամայում էր ծառաներին, որ ամեն ջանք գործ դնեն Հելիին օգնելու. իսկ տիկին Շելքին, որը փոքրի շատէ այս աղմուկի պատճառը հասկանում էր, կանգնած իւր սենեակի պատուհանի մօտ, չէր կարողանում ծիծաղը պահել, նրանց իզուր ջանքերը տեսնելով: Վերջապէս կէսօրուայ մօտ երեւցաւ Սամուէլը, յաղթական կերպով նստած իւր ձիու վերայ, և բերում էր Հելիի ձին սանձից բոնած: Խեղձ կենդանին արիւն քրտի՞ք էր մտել. նրա կրակոտ աչքերից ու քթածակերից բարձրացող գոլորշին ցոյց էր տալիս, որ գեռ բոլորովին չէր հանդարտուած:

— Բանեցին, բռնեցին, գոչեց Սամուէլը, իւր շուրջը հպարտ հայեցք ձգելով.— եթէ սև Սամուէլը չ'լինէր, մինչև այժմ ոչոք ոչինչ չէր կարող անել իսկ ես բռնեցի:

— Դո՞ւ էիր, գոչեց բարկացած Հելին, — եթէ գու չ'լինէիր, այսքան շփոթ չէր կարող լինել. գու եղար ամենի պատճառը:

— Թո՞ւ օրհնէ մեզ Աստուած, մանաւ անդ ինձ, որ այսքան վաղեցի ձիու ետևից և հազիւ հազ բռնեցի, այնպէս որ արիւն քրտի՞ք եմ մտել

— Բաւական է, բաւական, ասաց Հելին, քո կատակների շը-

նորհիւ երեք ժամ կորցրի, այժմ ձանսապարհ ընկնենք, և թող էլ չ'կը կնուեն ձեր անմիտ կատակները:

— Ի՞նչպէս, պարոն, վրաբերեց Սամուէլը, — ուզում էք սպանել թէ մեզ՝ նեգրներիս և թէ ձիերի՞ն. նեգրները այնքան յոդնած են, որ հազիւ կարող են տեղից շարժուել իսկ ձիերը լողում են քըրտինքի մէջ: Անկասկած դուք կը կարդադրէք ճաշից յետոյ ձանսապարհ ընկնել ձեր ձին յոդնած է և յեխոտուած, նորան հարկաւոր է մաքրել մէրբին կաղում է, և իմ կարծիքով տիրուհին չ'թշլ տայ այսպէս ձանսապարհ ընկնել: Միւս կողմից, դուք անհոգ եղէք, պարոն, ելեղային գժուար չ' բոնել որովհետեւ նա շատ արագաքոյլ չէ: Տիկին Շելքին, որ իւր սենեակի պատուհանի մօտ կանգնած՝ մինչև այժմ հետաքրքրութեամբ ականջ էր զնում սրանց խօսակցութեանը, զուրս եկաւ, և մօտենալով Հելիին, քաղաքավարութեամբ յայտնեց իւր ցաւակցութիւնը նորա անյաշողութեան մասին, և խնդրեց, որ մնայ Ճաշին, հաւատացնելով որ Ճաշը շուտով պատրաստ կ'լինի: Թէպէտ գուր չեկաւ Հելիին այս հրաւերը, բայց էլ ուրիշ Ճար չ'կար. զժգոհ ու տրտում մտաւ հիւրասենեակը:

— Հա՛, տեսա՞ր, տեսա՞ր, ասաց Սամուէլը, ախոռը մտնելով.— ա՛ իս, ի՞նչ հիանալի բան էր... այն ինչե՞ր չէր անում— պայտ պայտ էր գալիս, վերուվեր թաշում, հայհոյում: Վա՛, վա՛, ասում էի ինքս ինձ, հայհոյիր, աղաղակիր, ինչքան կամենաս, յիմար անպիտան: Զիոն ուզում էր բռնել այնպէս չէ՞; բայց շատ կարելի է աւելի խեղձ նեղրներին էր ուզում բռնել: Ա՛ իս, Տէր Աստուած, կարծես գեռ ևս աչքիս առաջ լինեն նորա կատաղի աչքերը: Դու էլ նորան այնպէս տեսար, Անդրէաս, ինչպէս ես, այնպէս չէ՞:

Այսպէս Անդրէասն ու Սամուէլը մէջքները պատին տուած խօ-

սում էին, հանգըներ անում ու ծիծաղից թուլանում:

— Անդրէա՛ս, ես չէ՞ի ասում, ասաց ծանր կերպով Սամուէլը Հեղի ձին մաքրելով, — ես չէի՞ ասում, որ ամենից զլխաւորն է խորամանկութիւնը. հէնց զորանով են նեզըները միմեանցից աարբերվում: Մինչեւ երիտասարդ ես, Անդրէա՛ս, սովորի՛ր զիտող լինել: Ես դեռ առաւօտը իմացայ, թէ ինչ էր ցանկանում տիրուհին, չ'նայելով որ նա ինձ մի խօսք անգամ չէր ասել: Խորամանկութիւնը, ինչպէս ասում էր մեր պարոնը, հոգւց ընդունակութիւն է. ամենքը միատեսակ ընդունակութիւն չունեն, բայց մարդս աշխատելով կարող է ձեռք բերել:

— Կարելի է, պատասխանեց Անդրէասը, բայց կարծեմ, այսօր ես բաւական օգնեցի քո հնարադիտութեանը և վատ չ'կատարեցի դերս :

— Անդրէա՛ս, ասաց Սամուէլը ինքնաբաւական կերպով, — դու անխելք տղայ չես. ես այժմ գիտեմ դու ի՞նչընդունակութիւն ունես և պէտք եղած ժամանակ ես քեզ կ'զիմեմ. էջն էլ երեմն ջռուց յառաջադէմ է լինում: Այժմ, Անդրէա՛ս, գնանք տուն, ես հաւատացած եմ, որ մեր տիրուհին անուշ կերակրելէններից մեզ ևս բաժին կ'տայ:

Թաղլինք առ ժամանակ նելքի տունը և դառնանք դէպի խեղձ էլիպան: Ահա նա արագ քայլերով շտապում է հեռանալ իւր միակ ապաստանարանից. ահա նա տխուր ու տրտում փախչում է իւր առաքինի տիրուհու հովանաւորութիւնից, որը միշտ բարի և քաղցր է եղել դէպի իրան: Իւրաքանչիւր քայլափոխում հրաժարական ողջոյն է տալիս իւր ծանօթ առարկաներին: Պարզ և աստղալից երկինքը նրա մոքի մէջ պատկերացնում է անցած գնացած



Սուս, Հենրիկ, իսկանց խօսիք. անպիսան մարդու հիել է ուզում  
է Հենրիկովին մօքից բաժնել . . .

տիտոր յիշատակները — իւր անդեան տեղը, այն ծառերը, որոնց  
տակ մանկութեան ժամանակ խաղացել էր, այն անտառը, ուր իւր  
երջանկութեան ժամանակ ամուսնոյ ուսի վերայ գլուխը թեքած՝  
յաճախ դուրս էր գնում զբօնելու։ Մի խօսքով, ամեն մինոր առար-  
կայ նորա սրտում քաղցր յիշողութիւններ էր յարուցանում և կար-  
ծես նախատինք կարդալով նորան, հարցնում էին, թէ ո՞ւր ես փախ-  
չում, թէ ո՞ր յարկի տակ կ'գտնես հանգստութիւն։ Բայց մայրական  
սկը ամեն բանի յաղթող է. իւր որդու մօտահաս վտանգը աչքի  
առաջ ունենալով, այնպէս ալիացել էր նորա սիրու, որ ոչինչ նե-  
ղութիւն նորա աչքին չէր երեռում։ Հենրիկոսը թէպէտ այնքան փոքր  
չէր, որ չ'կարողանար իւր ոտով գնալ բայց վախը այնպէս էր տի-  
րել խեղճ՝ մօր սրտին, որ մի վայրկեան անդամ ցած չէր գնում  
նորան, պինդ գրկած ունէր, որ չ'լինի թէ կարողանայ մէկը իլել  
նորան մօր զրկից, և այսպէս արագացնում էր իւր քայլերը։

Առած գետինը ճայթում էր նորա ոտքերի տակ և այս Ճայ-  
թոցը ստիպում էր խեղճին դողդողալ։ Ճանճի բզբոցը, թռչունի  
սլացումն, ամեն — թէ շնչաւոր և թէ անշունչ առարկայի ձայնից  
խեղճի արիւնը սրտին էր խփում և առաւել ևս արագացնում էր  
նորա քայլերը։ Նա այլ ևս չէր զգում երեխայի ծանրութիւնը, որը  
նրան վետուրի նման թեթև էր երեռում. ոլքան վախը շատանում  
էր, այնքան աւելի կարծես մի գերբնական զօրութիւն առաջ էր  
մղում նորան, իսկ նորա տժգոյն, ցամաքած շրթունքները այս խօս-  
քերն էին արտասանում. «Տէր Աստուած, օգնի՛ր ինձ, Տէր, Փրկի՛ր  
ինձ»։ Սկզբում Հենրիկոսը վախից ու զարմանքից չէր կարողանում  
քնել բայց տեսնելով մօր գդուանքով ու խնամքով նանիկ ասելը և  
լսելով նորա հաւատացնելը, թէ կաղատէ նրան անպատճառ, երե-

խան, որի աչքերը երկար անքուն մնալուց վասկվում էին, հարցրեց մօրը, փաթաթուելով նորա վզին.

— Ասա, մայրի՛կ, կարել՞ է քնել:

— Քնի՛ր, հոգեակս, եթէ ուզում ես:

— Բայց, մայրիկ, եթէ քնեմ, չե՞ս թոյլ տայ նորան, որ ինձ տանէ:

— Զեմթոյլ տայ Աստուծոյ օգնութեամբ, պատասխանեց մայրը գունատուելով, և նորա մեծ և սեռակ աչքերով լցուեցան կրակով:

— Ճշմարիտ եմ ասում, մայրի՛կ:

— Այսո՛, որդեակ, ճշմարիտ եմ ասում, պատասխանեց մայրը ու ինքն իւր ձայնից սարսափեց, կարծես ինքը չլինէր խօսողը, այլ ըսում էր իւր հոգւոյ արձագանքը:

Եւ այսպէս, մանուկը իւր մօր խոստանաքի վերայ յոյս դրած՝ հանդիստ քնեց: Մի քանի ժամից յետոյ նոքա հասան ծառերով շրջապատած մի հովանի տեղ, որի միջով անցնում էր մի պարզազեխր: Հենրիկոսը ցանկանում էր մի բան ուտել և այս պատճառով մայրը, ցանկից միւս կողմն անցնելով, թագիացաւ ապառաժի յետել, որ անցորդները չկարողանան նորան տեսնել և ուտելեղիններ հանեց կապոցից:

Տեսնելով որ մայրը ոչինչ ուզում ուտել Հենրիկոսը մանկան սիրով փաթաթվում էր մօր պարսնոցին և աշխատում էր մի բան ուտեցնել նորան, բայց խեղճ մայրը կարծում էր, որ հացի մի փոքրիկ փշրանքն էլ կարող է խեղճել նորան:

— Ո՛չ, ասում էր նա, մայրիկը չի ուտի ոչինչ, մինչեւ քեզ չփրէ. գնանք շուտով առաջ, առաջ՝ դեպի գետը:

Աւորին էլեղան կանգ առաւ պաշարեղիններ գնելու մի դաս-

տակերտի մօտ, որը իւր արտաքին գեղեցկութեամբ ու մաքրութեամբ գրաւեց նորա ուշադրութիւնը. յետոյ մտաւ մօտիկ հիւրանոցը մի քանի անհրաժեշտ տեղեկութիւններ հաւաքելու:

— Օ՛չից գետը, պատասխանեցին նորան, շատ մեծացել է և իւր պղտոր ալիքներով ահազին սառուցներ է փախցնում:

— Ասւ չ'կայ \* \* \* ում, հարցրեց էլեղան տանտիկնոջից:

— Ո՛չ, նաւեր էլ չեն մանգալիս:

Այս տեսուր պատասխանից յետոյ, էլեղան մօտեցաւ պատուհանին, և հէնց որ դուրս նայեց, նորա ականջին մի աղաղակի ձայն հասաւ, որով նեղիները նախազգուշացնում են միմեանց մօտահասվունդի ժամանակ: Խոկոյն էլեղան ձանաչեց Սամուէլի ձայնը, որը գլխարկը այնպէս էր ծածկել, որ քամին հեշտութեամբ կարողանար փախցնել նորա համար որ, եթէ Հելին հարցնելու լինէր աղաղակի պատճառը, նա գլխարկի փախցնելը պատճառը բերէր:

Ամամուէլից մի քանի քայլ հեռու գալիս էին Հելին և Անդրէասը:

Այս սարսափելի տեսարանը, փոխանակ նորա վերայ երկիւղ ձգելու, աւելի արիացրեց էլեղայի սիրու: Հիւրանոցից դէպի գետը մի դուռն էր բացվում: Թշուառ մայրը շտապով իւրում է անկողնից իւր երեխային, որին մի բոպէ առաջ պառկեցրել էր, դողդողալով պինդ կացնում է կրծքին և կայծակի արագութեամբ սանդուղքներից ցած է վազում: Նոյն միջոցին, երբ նա հասնում է գետի ափին, գերեվաճառը նկատում է նորան: Հելին շտապով իջնում է ձիուց, և «Սամուէլ Անդրէաս» դոչելով՝ վազում է կնոջ ետևից, որ փախչում էր որպէս մի արագնթաց եղջերու:

Այս սարսափելի բոպէին էլեղայի ոտքերը կարծես չէին դիպչում գետնին, մի բոպէումնա հասաւ գետի անդունդի մօտ. հալածողները

Նորանից մի քանի քայլ հեռու էին: Ելիզան մի անսովոր ճիչ ար ձակեց և այնպիսի ուժով, որ Աստուած միայն վտանգի մէջ եղող ներուն է տալիս, թռաւ պղտոր հեղեղատի մէջ ու կանգնեց աս. ռուցի մի մեծ կտորի վերայ, որ ջուրը տանում էր իւր հոսանքի հետ:


Վերին աստիճանի յուսահատութիւնը կամ խելագարութիւնը միայն կարող են ստիպել մարդուն մի սյդպիսի համարձակ քայլ անելու: Սամուելն, Անդրէասը ու Հելին այս տեսարանից սարսափած՝ յանկարծ աղաղակ բարձրացրին:

Կապտագոյն սառուցը, որի վերայ թռաւ Ելիզան, տրաքտրաքեց նորա ոտքերի տակ, բայց նա մի վայրկեան համարեա չ'կանգնեց նորա վերայ. սաստիկ ճիչ բարձրացնելով, նա մի սառուցից միւս սառուցի վերայ էր թռչում, սլքվում, վայր էր ընկնում, բայց նորից վեր էր կենում ու շարունակում իւր ձանապարհը: Նա կորցրեց իւր կօշիկները, նորա զուլպաները մի քանի տեղ պատուացան, բայց նա ոչինչ չէր տեսնում, ոչինչ չէր զգում և միայն այն ժամանակ ուշքի եկաւ, երբ մի մարդ նրա ձեռքից բռնեց և միւս ափի վերայ դուրս տարաւ:

ՏԻԿԻՆ ՊԱԼՄԵՐ. (վերկենալով այլայլուած) սիրելի որդիք, այս օրու այ ժողովը վերջացաւ:



### ԵՐՐՈՐԴ ԱՌԱԿՈՅՑ



ԻԿԻՆ ՊԱԼՄԵՐ. Երէկ, որգեակներ, մենք տեսանք մօր աներկիւղ արիասրտութիւնը իւր որգւյ փրկութեան համար: Այժմ թողնենք նորան առ ժամանակ, որ հանգտանայ իւր կրած չարչարանքներից, իսկ մենք դառնանք դէպի Թովմաս եղայրը:

— Խեղճ թովմաս, ասաց Հեղինէն, մենք նորան թողնենք այն ժամանակ, երբ պէտք է բաժանուիր իւր ընտանիքից:

— Այսո՛, պատասխանեց տիկին Պալմէրը. այսօր մենք նորան տեսնում ենք Միսսիսիպի գետի վերայ հանդարտ անցնող շղենաւի մէջ: Շոգենաւի մէջ ձանապարհորդների մեծ քաղմութիւն խառն է լինում միմեանց հետ, որոնց մէջը դժուար կարելի էր նկատել մեր համեստ ընկերոջը և բարեկամին: Վերջապէս մենք գտնում ենք նորան մի անկիւնում առանձնացած՝ նստած է արկղների վերայ: Նա իւր համ-

բերութեամբ և հեղութեամբ կարողացաւ մեղմացնել իւր նոր տիրոջ սիրտը և մինչև անգամնորա մէջ մի տեսակ հաւատարմութիւն գրաւեց դէպի ինքը, և այդ պատճառով օգուտ էր քաղցւմ իւր աղատութիւնից, այնէ՝ իրաւունք ունէր շոգենաւի վերայ մանգալ առանց արգելքի: Նա առանց հոգնելու ամեն մի բոպէ օգնում էր թէ նաւաստիներին և թէ արհեստաւորներին միևնոյն պատրաստականութեամբ ու սիրով, ինչպէս որ Կենտուկիիում մի ժամանակ աշխատում էր իւր տիրոջ մօտ: Աղատ ժամին առանձնացած նստում էր մի անկիւնում արկղների վերայ, և չ'նայելով իւր հոգւոյ տանջանքին, իւրեան բաղդաւոր էր համարում, երբ ժամանակ էր գտնում Սուրբ-զիրքը ձեռքն առնել և փոքր ինչ կարդալ:

Յիրաւի, նա չէ կորցնում ոչինչ, ով որ ուշադրութեամբ կարդում է Սուրբ զիրքը. ընդհակառակն նորա իւրաքանչիւր միտքը ոսկու նման պէտք է կշռել որ մարդ կարողանայ գնահատել նորան, որպէս արժան է:

Ճանապարհորդների մէջ գտնվում էր մի երիտասարդ հարուստ և ազնուական կալուածատէր Սէն Կէր անունով, որը Նոր—Օրէանի քնակիչ էր: Նա իւր հետ ունէր իւր հինգ թէ վեց տարեկան աղջիկը, որին խնամք էր տանում իւր աղջական մի կին: Թովմասը շատ անգամ տեսնում էր այս փոքրիկ երեխային շոգենաւի վերայ: Մանուկը իւր վառվուուն և ազնիւ վարմունքով մանկական գեղեցկութեան նախատիպ էր. նորա կասպուտակ աչքերը, որ արտայայտում էին մանկան խոհեմութիւնն ու խելքը, քաղզը հայեացքը և ծիծաղկոտ գէմքը—յափշտակում էին ամենի սիրտը. ուշադրութիւն դարձրէք նորա վղին, նայեցէք նորա վայելչակազմ հասակին, ո՛րքան գեղեցիկ են նորանք: Ոչ սլակաս յափշտակող են նորա շագանակագոյն

ոսկեշող երկար մազերը, նորա մցգ արտեանունքը, նորա կապոյտ աչքերը: Աս մի զուարթ ու խելք մանուկ էր և ոչ թէ տխուր և ծանր էակ: Զուարձալի էր տեսնել երբ նա շոգենաւի վերայ վաղշղում և խաղում էր անդադար: Նա մի վայրկեան հանդարտ չէր կենում: Նաւի մէջ ծայրէ ի ծայր պտտում էր. ամեն տեղ մանում էր և զուրս գալիս. մօտ էր գնում շոգենաւի մէջ եղող ամէն թշուառներին և ողորմելիներին. հայրն ու դայեակը փոքրիկ աղջկան չէին կարողանում մի բոպէ մօտները պահել հէնց որ գնում էր նորանց մօտ, իսկոն մի վայրկենում թողնում էր նորանց ու փախչում:

Թովմասը իւր բնական զիւրազգաց երևակայութեամբ օրլստօրէ աւելացնում էր իւր սէրը դէպի այս փոքրիկ աղջիկը. սա մի երկնային էակ էր երևումնորա տչքին, երբ տեսնում էր այս մանկական դէմքը ոսկեշող երկար դանդուրներով. երբ նորա կապոյտ աչքերը ծածուկ դուրս էին նայում բամբակների հակերի տակից, կամ փայլում էին նաւի վերայ դարսած սնտուկների վերայ—այն ժամանակ նա երևում էր նորան մի հրեշտակ, որ երկինքն է ու զում թռչել:

Թովմասը, որ ուշադրութեամբ դիտում էր նորա արարքները, շատ անգամ տեսնում էր նորան այն տեղում, ուր Հելին իւր գերիներին՝ թէ կանանց և թէ տղամարդերին անտառների նման շըղթայած ածել էր: Աղջիկը հանդարտ կերպով անցնում էր այն թըշշուառների մօտովը, նայում էր նորանց վերայ սիրով ու կարեկցութեամբ, բալ ձրացնում էր իւր փոքրիկ ձեռքերով նորանց ծանր շղթաները և յետոյ հեռանում էր հառաջելով:

Այի փոքր ժամանակից յետոյ Թովմասը զուարձանում էր տես-

նելով որ աղջիկը կրկին վերադառնում էր նորանց մօտ, բերելով իւր հետ նարինջներ, ընկոյզներ և զանազան քաղցրելէններ, բաժանում էր թշուառներին և դարձեալ աներեւութանում:

Թովմասը շատ էր ուզում խօսել այս աղջկոյ հետ և չէր համարձակվում: Բայց միւնոյն ժամանակ նա շատ միջոցներ գիտէր երեխաներին գրաւելու համար. նա շատ աեսակ երեխայական խաղալիքներ գիտէր շինել և մեծ մասամբ նորա գրպանը լիքն էր լինում դորանցով: Առաջ այս խաղալիքները շինում էր իւր տիրոջ՝ նելքի երեխաների համար, իսկ այժմ նորանք կարող էին ծառայել ծանօթութիւն և բարեկամութիւն ձեռք բերելու համար:


Չ'նայելով, որ ի՞նչպէս երեսում էր, ամեն բանով հետաքրքրվում էր այդ փոքրիկ աղջիկը, այնուամենայնիւ կարծես մի կիսավայրենի թռչունի նման նա ամենքին հեշտութեամբ չէր մօտ թողնում: Պատուհում էր, որ նա գտանվում էր Թովմասին կից հակի վերայ, այն ժամանակ երբ խեղճ գերին շինում էր որեիցէ խաղալիք: Առաջին անգամը երեխան զգուշութեամբ ու ամօթխածութեամբ էր ընդունում Թովմասի տռաջարկած խաղալիքները, բայց որովհետեւ այսպիսի ընծաները կրկնվում էին յաճախ, դորա համար նոքա շուտով բարեկամութիւն հաստատեցին:

Երբ մի փոքր աւելի մօտիկ ծանօթացաւ Թովմասը այդ փոքրիկ աղջկայ հետ, հարցրեց նորան:

— Ի՞նչպէս է ձեր անունը:

— Եւանժելին Սէն Կէր, բայց հայրիկն ու մայրիկը ինձ Եւա են կանչում: Քո անունն ի՞նչ է:

— Ամ անունն է Թովմաս, բայց փոքր երեխաները այնաեղ՝ կենտուկիում ինձ միշտ Թովմաս եղբայր էին կանում:



— Ուրեմն ես էլ քեզ Թովմաս եղբայր կ'կանչեմ, որովհետեւ ես  
քեզ շատ եմ սիրում: Դու ո՞ւր ես գնում, Թովմաս եղբայր:

— Ինքս չ'գիտեմ, օրիո՞րդ:

— Ի՞՞նչպէս չ'գիտես, հարցրեց աղջեկը զարմացած:

— Այնպէս, միայն գիտեմ, որ պէտք է ծախուեմ մէկի վերայ,  
բայց թէ ո՞ւմ վերայ, յայտնի չէ:

— Հայրիկս կարող է քեզ գնել պատասխանեց աղջեկը աշխառ-  
ժութեամբ, իսկ եթէ գնէ քեզ, մեր տանը շատ լաւ կապրես. իսկոյն  
կ'գնամ, կ'հարցնեմ հօրս:

— Շատ շնորհակալ եմ օրիորդ, պատասխանեց Թովմասը:

Այդ ժամանակ շոգենաւը կանգնեց փայտ առնելու և նւան,  
լսելով հօր ձայնը, կայծակի արագութեամբ վաղեց նորա մօտ:

Թովմասը վերկացաւ և գնաց մշակներին օդնելու:

Աղջեկը հօր հետ, կանգնած շոգենաւի մէջ, նայում էին, ինչ-  
պէս նաւը հեռանում էր ափից. անիւները հազեւ սկսել էին շար-  
ժուել, որ աղջեկը հաւասարակշռութիւնը կորցրեց և ընկաւ ջուրը  
Հայրը վախեցած քիչ էր մնում նորա ետևից իւրեան ջուրը զցէր,  
բայց նաւաստիներից մէկը նորա թեկից բռնելով՝ արդելեց: Իսկ Թով-  
մասը մի վայրկենում ցած թռաւ ջրի մէջ, բռնեց աղջկան, որին,  
բոլորովին թրջված, լողալով հասցրեց հարիւրաւոր ձեռքերին, որ  
մեկնել էին նաւից նորան օդնելու: Հայրը նորան բոլորովին  
ուշաթափ տարաւ կանանց մասը, ուր նա շուտով ուշքի եկաւ:

Միւս օրը երեկոյեան, մի սաստիկ տօթային ժամանակ, շոգե-  
նաւը հասաւ նոր—Օլէան: Երբ ձանապարհորդները պատրաստվում  
էին ափը դուրս դալ, Թովմաս եղբայրը նաւի ափը նստած, ձեռքերը  
կրծքի վերայ խաչած՝ անհանգստութեամբ նայում էր շոգենաւի միւս

ծայրում հաւաքած մի խումբ մարդկանց վերայ։ Այնտեղ կանգնած էր Եւան, նորա զէմքը երէկուայ անցքից յետոյ փոքր ինչ գունաթափուել էր։ Նորա մօտը բամբակի հակերի վերայ յենած էր մի գեղեցիկ նորահաս տղամարդ, որը ձեռքին բռնած ունէր փողի քսակ։ Առաջին հայացքից նա երևում էր, որ Եւայի հայրն էր—միւնյն դէմքի ազնիւ գծաղիրը, միւնյն ոսկեշող մաղերը, թէպէտ դէմքի արտայայտութիւնը բոլորովին ուրիշ էր։ Հօր բացկապոյտ և մեծ աչքերում չէր նշմարվում Եւայի տիսուր և մտածող բնաւորութիւնը։ Նորա աչքերը արտայայտում էին կենդանութիւն ու համարձակութիւն և փայլում էին մի վսեմ փառքով։ Նորա նուրբ ու քլնքոյշ շրջունքները արտայայտում էին մեծամատութիւն և թեթև հեգնութիւն, իսկ ազատ և վայելու շարժուածքները ցցց էին տալիս խելքի ոյժը և կարողութիւնը։

Գրեթեվաճառի և անհոգ ու առատ երիտասարդի մէջ սկսած առեւտուրը շուտ կ'վերջանար, եթէ որ վերջինը չկամենար դիտմամբ երկարացնել խօսակցութիւնը, որի համար, ի հարկէ, վճռել էր վճարել շատ տալլէրներ։ Բայց Եւան, որին յայտնի չէր հօր մտադրութիւնը, նայում էր սորա վերայ անհանգստութեամբ։ Նա վըդովուած՝ բարձրացաւ մի հակի վերայ և ասաց հօր ականջին։

— Պնեցէք նորան, հայրիկ, դուք շատ փող ունեք, ի՞նչ էք մտածում գնի վերայ։

— Դու նորանից ի՞նչ պէտք է շինես, աղջիկս, նորան փայտէ ձի հօ չե՞ս շինելու, կամ մի այլ խաղալիք։

— Ուզում եմ նորան բաղդաւորացնել։

— Այդ ուրիշ հարց է։

Այդ ժամանակ գերեվաճառը տուեց երիտասարդ պարոնին

վիայական Շելքի ստորագրութեամբ։ Վկայականը աչքի անցնելուց յետոյ Սէն Կէրը ասաց աղջկան։—գնանք, Եւաջան—ու թէկից բռնելով, տարաւ նորան շողենաւի միւս ծայրը։

Սէն Կէրը, մօտ գնալով Թովմասին ու կղակից բռնելով, ասաց։  
— Բարձրացրու աչքերդ, Թովմաս, և նայի՛ր, հաւանո՞ւմ ես նոր պարոնիդ։

Թովմասը բարձրացրեց աչքերը։ Ոչոք չէր կարող նայել այս երիտասարդ, գեղեցիկ և ուրախ դէմքին, որ չ'զգար մի տեսակ բաւականութիւն, և Թովմասը, աչքերը լորած արտասուքով, ասաց։

— Աստուած օրհնէ ձեր կեանքը, պարոն։  
— Յուսով եմ, որ աղօթքդ կ'լսուի. կարծեմ անունդ Թովման է. ուրեմն լսիր, Թովմաս, կարո՞ղ ես ձիաներիս հոգ տանել։  
— Պաշտօնս միշտ այդ է եղել պարո՞ն, Շելքին շատ ձիաներ ունէր։

— Ուրեմն գու կառավար կ'լինես, միայն այն պայմանով, որ շաբաթը մի անգամ խմիր, բացի մի քանի արտաքոյ կարգի պատճառներից։

Այս վերջին խօսքերը կարծես զարմացրին Թովմասին և նա փոքր ինչ վերաւորուած պատասխանեց։

— Ես ամենեին գինի չեմ խմում, պարո՞ն։  
— Այդ շատ հին երգ է, Թովմաս, բայց մենք կ'տեսնենք. կառավարը որ բոլորովին գինի չ'խմէ, արմաւ հաւ կ'դառնայ։ Բայց մի՛ տրտմիր, աւելացրեց Սէն Կէրը ուրախ կերպով, նկատելով գերիի տիսուր դէմքը. ես չեմ կասկածում, որ գու քեզ լսաւ կ'պահես։

— Յայտնի բան է, պատասխանեց Թովմասը։  
— Դու էլ շատ բաղդաւոր կ'լինես, Թովմաս եղայր, ասաց

Նւան, հայրիկը ամենի հետ բարի է վարվում, միայն երբեմն հանաքներ շատ է սիրում:

— Շնորհակալ եմ քեզանից, Եւա, ասաց ժպտալով Սէն Կէր և իսկոյն հեռացաւ այնտեղից:

ՑԻԿԻՆ ՊԱԼՄԵՐ. Այս առաւօտը աւելի ուրախ է վերջանում երէկուանից. մենք տեսնում ենք, որ Թովմասը ծառայութիւն է մտնում բարի ու մարդասէր պարոնի մօտ փոքրիկ Եւայի միջնորդութեամբ:

ՍՈՖԻԱ. Ինձ չէր վրդովի խեղճ՝ նեգրի վեճակը, եթէ ես հաւատացած լինէի, որ նա կ'մնայ նորա մօտ:

ՀԵՂԻՆԵ. Ես էլ միւնոյնն եմ կարծում. բայց նորա մասին դեռ չենք վերջացնում և ես նախագուշակում եմ, որ նա չի մնայ մշտապէս Սէն Կէրի ընտանիքի մէջ:

— Ես էլ այդպէս եմ կարծում:

ՑԻԿԻՆ ՊԱԼՄԵՐ. Դժբախտաբար, այդ իրաւ. է, սիրելիք, խաղաղ ու հանդարտ կեանքը երկար պատմութեան կարօտութիւն չունի. նա անցնում է առանց աղմուկի հովտի միջով հոսող առուակի նման: Վաղը կ'տեսնենք այս գերդաստանի ընտանեկան կեանքը ու Թովմաս եղբօրը, կ'տեսնենք նոյնպէս թէ ինչպէս մեր բարի ընկերը կ'ակաէ իւր նոր պարապմունքը:



### ՉՈՐՏՈՐԴ ԱՌԱԽՈՅ



ՑԻԿԻՆ ՊԱԼՄԵՐ. Փեսացուների մեծ բազմութիւն որոնում էր հարուստ ժառանգուհի Մարիամ Ոիչմօնդի ձեռքը, բայց Օդոստինոս Սէն Կէրը յաղթեց միւս բոլոր հակառակորդներին և Մարիամն էլ մտածեց, որ նորա ամուսինը անշնորհակալ մարդ կ'համարուի, եթէ չգնահատէ իւր այս բաղդաւորութիւնը: Բայց Մարիամը զուրկ էր սիրոց զգացմունքից, իսկ իւրելք բաւական սահմանափակ էր:

Հօր մէկ հատիկը լինելով, նորա ամեն ցանկութիւնները կատարվում էին. և օրիորդին շրջապատող բազմաթիւ ծառաներն էլ հօրը հաճոյանալու համար, կատարում էին ամեն պատրաստականութեամբ նորա բոլոր ցանկութիւններն և ընչին հաճոյքները: Օրիորդը ամեննեին չէր մտածի անդամ, որ մեզանից իւրաքանչիւրը

ունի իւր պարտաւորութիւնները կեանքիս մէջ։ Մարիամը իւր ինքնասիրութեամբ և սաստիկ պահանջող բնաւորութեամբ ու կամակորութեամբ ձանձրացնում էր իւր շըջապատողներին։

Այս կլէրը իւր քաղցր ու ներողամիտ բնաւորութեամբ պահպանեց առժամանակ ընտանեկան խաղաղութիւնը, նա իւր աղջկան մէծ մօր յիշատակի համար նւա անուանեց, որ նա էլ նորա նման խելք, բարի և աղնիւ լինի։ Բայց չափից դուրս նախանձոտ Մարիամը երեւակայեց, որ ամուսնու իւր վերայ ունեցած սէրը աղջկայ վերայ փոխուեց։ Ֆիզիքական շարժողութիւնից զուրկ—փափկասէր ու անգործ կեանքը, մաշող նեղսրտութիւնը և այս ամենից առաջացած դիւրագրգութիւնը—միքանի տարում երիտասարդ ու գեղեցիկ կինը դեղին ու թարշամած կին դարձաւ, որի կեանքը, իրրեթէ, ընտանեկան անհաշողութիւնների զոհ էր եղած։ Մի խօսքով զոհ ամեն տեսակ անբախտութիւնների ու տանջանքների։

Այս անհամաձայնութիւնները շարունակվում էին անդադար և տան հոգատարութիւնը ծառաների վերայ էր մնում։ Միւնոյն ժամանակ Սէն կլէրի միակ աղջեկը շատ թոյլ կազմուածք ունէր և հայրը վախինում էր, որ երեխայի առողջութիւնը և նոյն իսկ կեանքը վտանգի չենթարկուի իւր մօր անհոգութիւնից։ Այս ծանր դրութեան մէջ Սէն կլէրը մտածեց Վերմօնտ շտատի մէջ բնակուող իւր աղջականներին այցելել։ Նա վերցրեց իւր հետ իւր աղջիկ նւային և կարողացաւ համոզել իւր հօրեղօր աղջեկ օրիորդ Օֆելիային ևս գնալ իրանց մօտ դէպի հարաւ, բնակուելու իրանց մօտ։

Այս ձանապարհորդութեան ժամանակն էր, որ ծանօթացաւ Թովմաս եղբայրը նւայի հետ և նորա ցանկութեամբ Սէն կլէրը գնեց Թովմասին։

Այժմ ծանօթանանք Օգոստինոս Սէն կլէրի հօրեղօր աղջեկ՝ Օֆելիա Սէն կլէրի հետ։

Կա իւր քառասուն և հինգերորդ աշունն էր անցկացնում նոր Անգլիայի նշանաւոր դատակերտի վերայ, երբ Սէն կլէրը եկաւ խնդրելու նորան, որ գայ իւր մօտ դէպի հարաւը։ Թո՛ղ նկարագրենք նորա կենդանագիրը հէնց նոր—Օրէան տանող շողենաւի վերայ եղած ժամանակը։ Ահա նա ձանապարհի լոյն չթեղէն շորով կանգնած է։ նա մի բարձրահասակ լեքը կին է։ նորա կազմուածքը յժմ է արտայայտում։ Երեսի անկիւնաւոր դժագրութիւնը, բարակ շրթունքները և մցյդ կենդանի աչքերը, որ անդադար շարժողութեան մէջն էին, և կարծես ուզում էին նախազգուշացնել մի որեկցէ անկարգութեան դէմ, ցոյց էին տալիս նորա ուսումնասէր, հեռատես և հաստատ կամք ունեցող բնաւորութիւնը։

Եթէ մենք ուշի ուշով քննենք նորա սովորութիւնները, կը նկատենք նորա վերին աստիճանի կարգասիրութիւնը և ճշտութիւնը, ճշտութեան կողմից կարող է նա նմանուիլ ժամացոյցին, իսկ խըստութեան կողմից շոգեշարժ մէքենային։ Նորա աչքում գլխաւոր յանցանքը, որից յառաջանում է ամեն չար բան, պարունակվում էր մի խօսքի մէջ, այնէ՝ ան կ ար գութ իւն։

Խւրաքանչիւր քայլ եթէ առանց խոհեմութեան է կատարված, կամ եթէ նպատակին համելու համար Ճիշտ ձանապարհ չեն գտել—Օֆելիայի աչքին զա անկարգութիւն է ը համարվում, իսկ գործողները անկարգներ են։ Մի խօսքով օրիորդ Օֆելիան իւր համոզմունքների համեմատ էր վարվում և ոչինչ բանով չէր հրաժարուի իւր պարտաւորութիւնները կատարելուց։

Առաջին անգամից դժուար է բացատրել թէ ինչ կերպով

Օֆելիան, որ Սէն Կէրի բնաւորութեանը հակառակ բնաւորութիւն ունէր, կարողացաւ փոխել առանձնացած դաշտերի մէջ գտնուող դաստակերտի խաղաղ, միատեսակ ու կարդաւոր կեանքը մի այնպիսի կեանքի, ուր նորան, անկասկած, սպասում էին անհամաձայնութիւններ, թունդ վէճեր և այնպիսի հասարակութեան մէջ գտնուել ուրտեղի վարքն ու սովորութիւնները հակառակ էին նորա համոզմունքներին և անյապաղչպէտք է հաշտուէին նորա զգացմունքների, կարծիքների ու սովորութիւնների հետ:

Այս գաղտնիքը կ'պարզուի մի քանի խօսքերով:

Օֆելիան Սէն Կէրին մօր պէս սիրում էր. դեռ Սէն Կէրի մանկութեան ժամանակ նա սովորեցնում էր մանկան հաւատոյ վարդապետութիւնը. նա էր խնամք տանումնորան, նորա սպիտակեղէնները նորոգում, մազերը սանրում և հասկացնումնորան այն պարտաւորութիւնները, որ պէտք է ունենար դէպի Աստուածն ու ծընողները: Այսպէս Սէն Կէրին մեծ աշխատութիւն պէտք չէր գործ դնել նորան համոզելու, որ պարտաւորութեան զգացմունքը նորան նոր—օրէան է տանում, որ նա պէտք է իւր լուսաւորեալ հրահանդի տակ ընդուներ փոքրիկ նւային ու փրկէր կնոջ հիւանդութիւնից խանդարուած տունը կատարեալ կործանումից:

Ճանապարհորդների կառքը կանգնեցաւ մի վաղեմի շինութեան առաջը, որը կէս ֆրանսիական և կէս խոպանական ճարտարապետութեան ճաշակով էր կառուցած: Դլասաւոր շինութեան առաջել գտանվում էր մաւրիտանական ճաշակի ընդարձակ բագ՝ որի քարե դաներից մասւ կառքը: Բագը չորս կողմից ըրջապատած էր լայն պատշգամբներով, որոնց գեղեցիկ զմբէթները և սիւները յիշեցնում էին Խոպանիայի արևելեան շքեղութիւնը: Սորանով մենք վերջաց-

նում ենք այս շինութեան նկարագրութիւնը, հաւատացնելով ընթերցողին, որ Սէն Կէրի բնակութեան միւս մասերն ևս նոյնպէս սրանցից պակաս Ճոխ և գեղեցիկ չեն:

Կառքի բաղ մտնելու ժամանակը նւան նմանում էր թունիկի, որ պատրաստ է դուրս թռչել վանդակից: Նորա դէմքը փայլում էր ուրախութիւնից:

— Մեր տունը սիրուն է, այնպէս չէ, դարձաւ նա դէպի Օֆելիան ուրախութեան աղաղակով:

— Հիանալի է, պատասխանեց Օֆելիան կառքից դուրս գալով. բայց ափսո՞ս, որ դորա վերայ երկու տեսակ դրօշմ կայ—հնութեան և հեթանոսութեան.

Այս Կէրը ժպտաց իւր ազգականի այս նկատողութեան վերայ և ապա դարձաւ դէպի Թովմասը, որը նեղների բնաւորութեան համեմատ հիանում էր իւր ըրջապատող առարկաների ճոխութեամբ, փառահեղութեամբ և յափշտակվում էր ցնորքներով: Նելքին, նկատելով նեղրի դէմքի վերայ սաստիկ զարմանք, հարցրեց:

— Հա՛, Թովմաս եղայր, քեզ այստեղը, կարծեմ, բաւական դուր եկաւ:

— Ա՛հ, պարոն, այստեղ ամեն բան հիանալի է:

Հէնց Սէն Կէրի գալստեան լուրը տարածուեցաւ թէ չէ, բոլոր նեղները՝ թէ կանայք, թէ տղամարդիկ, ծերելու և երեխաներ—եկան հաւաքուեցան վերին ու ստորին սրահներից ապարոնի գալուստը շնորհաւորելու:

Այս բաղմութեան մէջ մի քանի քայլ հեռաւորութեան վերայ նշմարվում էր մի խառնածին երիտասարդ, հարուստ ու նօր ճաշակով հագնուած. երեւում էր, որ սա մի նշանաւոր անձն էր,

որը շնորհալի կերպով նուրբ և անուշահոտ թաշկինակով հովհարում էր իւր դէմքը:

Հեռո՛ւ, հեռո՛ւ, գոռում էր նա, յետ քշելով նեղիներին սրահի միւս ծայրը. դուք ինձ ամաչեցնում էք ձեր արարքով, աւելացրեց նա կառավարչի եղանակով: Խնջո՞ւ էք խանդարում պարօնին տեսակցելու իւր ընտանիքի հետ:

Այս նկատողութիւնից ամաչեցան նեղիները և բաւական հեռու քաշուեցան:

Երբ որ Սէն Կէրը կառապանին ճանապարհ ձգեց, Ադոլֆոսը (այսպէս էր երիտասարդ խառնածինի տնունը), որը, ինչպէս տեսանք, աշխատեց ինքն ամենից առաջ կանգնելու զարդարուած ատլասէ բաճկոնով, սպիտակ վարտիքով և ոսկէ շղթայով, ողջունեց պարոնին ամենաշնորհալի կերպով:

—Ա՛, դո՞ւ ես, Ադոլֆո՞ս, ի՞նչպէս է առողջութիւնդ, հարցրեց Սէն Կէրը, ձեռքը մեկնելով դէպի երիտասարդ խառնածինը:

Այս ժամանակ խառնածինը շտապեց խօսել իւր երկու շաբաթառաջ սերտած ձառը:

—Լա՛ւ, լաւ, ասաց Սէն Կէրը իւր սովորական կիսածիծաղ կերպով. լաւ ես սերտել դասդ, Ադոլֆո՞ս, նայի՞ր միայն, որ բերած իրեղններս կարգին դարսած լինեն. ես կ'գնամ տեսնուելու իմ նեղիների հետ:

Այս ասելուց յետոյ նա տարաւ Օֆելիային դէպի սրահը տանող հիւրասենեակը:

Այդ ժամանակ Եւան ներս վազեց մի փոքրիկ առանձնասենեակում, որի պատուհանները նոյնպէս սրահն էին նայում: Այս տեղ դահաւորակի վերայ փոռուած պառկած էր մի սեւաչեայ բար-

ձրահասակ կին գեղնագոյն դէմքով: Եւան ընկաւ նորա պարանոցի վերայ և, գրկելով մի քանի անդամ, ասում էր.—Մայրի՛կ, սիրելի մայրի՛կ:

—Բաւակա՞ն է, բաւական, նեղսրտութեամբ ասաց տիկին Սէն Կէրը, զդյշ կաց, գլուխս մի՛ ցաւացրու, և նա մօտեցրեց իւր շըմունքները աղջկայ սիրուն ձակատին:

Շուտով մտաւ այնտեղ Սէն Կէրը իւր ազգական Օֆելիայի հետ և ներկայացրեց նորան իւր կողջը, որը ընդունեց նորան քաշավարութեամբ և մի տեսակ հետաքրքրութեամբ:

Հիւրասենեակի դրան մօտ հաւաքուած նեղիների խմբի մէջ նկատվում էր մի միջահասակ և ազնիւ կերպարանքով խառնածին կին, որը ուրախութիւնից և խոսվութիւնից դողում էր ամբողջ մարմնով:

Եւան, արագութեամբ մօտ վաղելով, պինդ դրկեց նորան իւր փոքրիկ ձեռքերով և ասաց.

—Ո՛հ, վերջապէս տեսայ քեզ, Մամիի:

Խառնածինը չգանգատուեց իւր գլխացաւի մասին, այլ արագութեամբ բարձրացնելով աղջկան կպցրեց իւր կրծքին և խելագարի նման սկսեց փայփայելու համբուրել նորան արտասուախառն աչքերով:

Ազատուելով խառնածինի գրկից, Եւան սկսեց մէկ նեղին մօտից միւսի մօտ գնալ, ողջունում էր նրանց, մէկին համբուրելով, միւսին ձեռք սեղմելով, այնպէս որ Օֆելիան չկարողացաւ չնկատել նորա տարօրինակ վարմունքը:

Սէն Կէրը ժպտաց և, դուրս գնալով սրահը, կանչեց.

—Ո՛հ, այժմ անպատճառ ամեն մէկիդ պէտք է մի մի բան

տալ. ամենքդ այստեղ էք. ահա, ասաց նա, հաշուելով բոլորի առուները. ամենքդ ուրախ էք, չէ՞ որ դարձեալ տեսնում էք ձեր տիրոջը, ասում էր նա, սեղմելով իւրաքանչիւրի ձեռքը: Զգոյշ կացէք, փոքրիկ ձանձեր, աւելացրեց նա, յանկարծ ոտքով կոխելով յատակի վերայ սողող փոքրիկ նեգրներին. զգուշացէք, թէ չէ ևս յանկարծ կարող եմ ոտքովս տրորել ձեզ:

Այս հանապի վերայ ամենքը ծիծաղեցին, և, երբ Սէն Կէրը մանր փող բաժանեց բոլորին, չորս կողմից լսուեցաւ բարձր աղաղակ.—շնորհակալութիւն, շնորհակալութիւն, բարի պարոն:

Այս տեսարանի ժամանակ տիկին Սէն Կէրը ստիպուեցաւ գլուխը բռնել ձեռքերով:

—Դուք, երեխ գլսացաւի հիւանդութիւն ունէք, հարցրեց նորան Օֆելիան, երբ Սէն Կէրը նեգրներին ձանապարհ գցեց:

—Այսօր մանաւանդ սասափի տանջվում եմ գլսացաւից, պատախանեց նա. ամունուս գալու րոպէից այնպիսի աղաղակ ու շփոթ ընկաւ մեր տանը, որ ինելքից կարելի է դուրս գալ:

—Պալսացաւի դէմ խաշած գիհի ջուրը շատ զօրաւոր դեղ է, ասաց Օֆելիան իւր սովորական հանդարտութեամբ: Գոնէ այսպէս էր ասում տիրացու Արքահամի կին Աւզուստան և ամենքն էլ հաւատացնում էին, որ նա շատ լաւ ինամք էր տանում հիւանդներին:

—Այդ շատ լաւ է, ասաց Սէն Կէրը, բայց երեխ դու կամենում ես մի փոքր ժամանակ գնալ սենեակդ հանգստանալու: Աղօլֆոս, գնա՞ իմաց տուր Մամմիին:

Միքանի րոպէից յետոյ եկաւ պատուելի խառնածին կինը, որին այնպէս սիրով փայփայեց նւան: Նա շատ վյելուշ կերտով էր հագնուած, իսկ գլխի վերայ ինքը փոքրիկ աղջեկը փաթաթել էր

նախշուն թաշկինակ:

—Մամմի, այս տիկնոջը քո հոգայողութեանն եմ յանձնում, ասաց Սէն Կէրը, նա ուզում է հանգստանալ տա՛ր նորան իւր նշանակած սենեակը և աշխատիր, որ ոչինչ բանում կարօտութիւն չունենայ:

Տիկին ՊԱԼՄԵՐ.—Մենք այժմ ծանօթացանք Սէն Կէրի ընտանիքի գլսաւոր անդամների հետ, իսկ հետեւեալ գլխում մենք նորից կ'տեսնուենք Եւայի և Թովմասի հետ:

ՀԵՂԻՆԵ.—Զեր պատմութեան մէջ, մայրիկ, մէկը իւր գեղեցիկ առաքինութիւններով պարզ ջոկվում է միւսներից: Ահ, մենք շատ անգամ ասել ենք, որ շատ երջանիք կ'համարենք մեզ երբ լսենք, որ այս ձշմարիտ քրիստոնեան աղատութիւն է ստացել:

Տիկին ՊԱԼՄԵՐ. Ինչ վիճակի կուզէ հանդիպի նա, ես ձեզ առաջուց կարող եմ երաշխաւորել, որ նա երեք չե փոխի իւր աղնիւ բնաւորութիւնը, որով, ինչպէս տեսնում եմ, տպաւորութիւն է գործել ձեր մանուկ սրտերի վերայ:





ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՌԱԿՈՅ

ԻԿԻՆ ՊԱԼՄԵՐ. Անցաւ երկու տարի Թովմասի Սէն Կլէրի մօտ մտնելու օրից։ Այսժամանակամիջոցում Եւան շատ մեծացաւ և նորա նեղրի հետ ունեցած բարեկամական զգացմունքը օրըստօրէ սկսում էր աճել Ինչ կ'վերաբերի Թովմասին նա սիրում էր Եւային ինչպէս մի թոյլ էակի—քնքոյշ և ջերմ զգացմունքով, որ մօտեցնում էր նորան հրեշտակներին։ Նա այնպէս գութունէր Եւայի վերայ և այնպէս պաշտում էր նորան, ինչպէս պաշտում է ծովի ալիքների մէջ տատանուող նաւաստին Աստուածածնին և Յիսուսին։

Թովմասը անպատմելի ուրախութիւն էր զգում, երբ կատարում էր Եւայի անմեղ ցանկութիւններն ու հաճոյքները։ Ամեն առաւօտ, երբ նա փողոց էր գնում առուտուրի համար, նորա աչքերն

անդադար այս ու այն կողմն էին նայում և որոնում էին ամենահազուադիւտ և անուշահոտ ծաղիկներ իւր բարեկամուհու փունջի համար։ Թովմասը գտնում էր նոյնպէս ոսկէգոյն նարինջներ ու կարմիր գեղձեր։ Ա՛հ, որպիսի ուրախութեամբ լցվում էր նորա սիրութ, երբ կիսաբաց դոնից նկատում էր Եւային, որ սպասում էր նորա գալուն և լսում էր նորա մանկական ձայնը.

— Թովմաս եղբայր, այսօր ի՞նչ ես բերել ինձ համար։  
Բայց Եւան էլ պարտքի տակ չէր մնում. թէև նա գեռ փոքր էր, բայց այնպիսի զգացմունքով և եղանակով կարգում էր Սուրբ գիրքը, որ խորին կերպով շարժում էր նեղրի սիրութ։

Ամառուայ սաստիկ շողերը ստիպեցին նրանց, որոնց միջոցները ներում էին, դուրս գնալ քաղաքից—շնչելու դիւղի ծովեղբեայ ու թարմ օդը։ Սէն Կլէրը առաջինն էր, որ իւր ընտանիքով տեղափոխուեցաւ Բօնշարտէնի լճի ափի վերայ գտանուող ամառանոցը։ Այս գեղեցիկ ամառանոցը գտանվում էր մի ընդարձակ այգու մէջ, որը չորս կողմից շրջապատած էր թեթև ու գեղեցիկ բամբուկեայ պատշգամբներով։ Ամառանոցի հիւրասենեակի պատուհաններից երեսում էին հաղարաւոր փառահեղ ու գեղեցիկ արեադարձային ծաղիկներ, որոնց միջով անցնում էին զանազան ձանապարհներ—որ տանում էին ուղղակի լճի ափը, որի մակերեսով մեզմ կերպով շարժվելով՝ ցոլացնում էր երկնքի կամսրը—կարծես օրօրելով նորան։

Մի առաւօտ Թովմասն և Եւան նստած էին ծաղիկներով և կանաչով հովանաւորուած լճի ափի մօտ, մամուապատ խոտերի վերայ։ Սուրբ գիրքը դրած էր Եւայի ծնկների վերայ, բայց նա սովորականին հակառակ չէր շտապում սկսել ընթերցանութիւնը։ Թովմաս եղբայրը մի քանի րոպէ սպասելուց յետոյ զարմացած և

երկչոտ կերպով բարձրացրեց աչքերը իւր փոքրիկ տիրուհու վերայ,  
չ'համարձակուելով հարցնել նրանից լռութեան պատճառը:

Եւան իսկոյն հասկացաւ նորա գաղտնի անհամբերութիւնը և  
իւր զամբիւղից հանելով մի բացարած նամակ, որի հասցէն ման-  
կական, բայց միւնոյն ժամանակ կլոր և համարձակ տառերով էր  
դրած, ասաց.

—Դու գիտե՞ս, Թովմաս եղայր, որ հայրս իմ խնդիրքով քո  
մասին նամակ գրեց Քլոյէին. ահա Գէորգ Շելքի գրած պատասխանը:

—Պարոն Գէորգի՝ պատասխանը, գուցեց Թովմասը բարձրաց-  
նելով իւր երախտագիտութեամբ լի աչքերը դէպի երկինք:

—Աս գրում է, որ Քլոյէն քաղցրութեամբ բաժանուելով  
Շելքի ընտանիքից, լաւ ռոճկով աեղ է գտել Լուէվելում մի քաղ-  
ցրավաճառի մօտ և աշխատում է փող հաւաքել Թովմաս եղօրը  
գնելու համար:

—Խեղճ Քլոյէ, կտրեց նորա խօսքը նեգրը արտասուելով:

Աս գրում է դարձեալ շարունակեց Եւան, Յովսէֆի ու Մով-  
սիսի յառաջադիմութիւնների մասին. խանճարուրի մէջ թողած  
աղջիկդ այժմ վազվզում է արագութեամբ, պտտում է տան չորս  
կողմը, և գտնվում է առհասարակ ամբողջ ընտանիքի և մանաւանդ  
Սօղօմէի հսկողութեան ներքոյ: Վերջապէս նամակի մնացած  
կէսի մէջ նկարագրում է Գէորգը իւր պարապմունքները: Նա գրում  
է, որ չորս հատ ձի ծնուեցաւ և հաւատացնում է, որ պարօն և  
տիկին Շելքի ջերմցանկութիւնն այն է, որ Թովմասին կրկին Կեն-  
տուկի վերադարձնեն:

Այս պարզ և անպաճոյճ գրած նամակը Թովմասին օրինակելի  
թվեցաւ:

—Ոհ, սիրելի օրիորդ, տուե՛ք ինձ պարոն Գէորգի նամակը,  
գուցեց նա. ես ուզում եմ կրկին և կրկին կարդալ, բարի՛ օրիորդ:

—Մեծ ուրախութեամբ, Թովմաս, յետոյ մենք նորան շըա-  
նակի մէջ գնել կ'տանք, կամենումնե՞ս:

—Ոհ, սիրելի, նազելի օրիորդ, գուցեց Թովմասը շարժուած սրտով:

—Բայց ամենից առաջ ես կ'ցանկանայի լսել քեզանից քո  
հայրենի խրձթից հեռանալու պատճառը: Դու երբէք այդ մասին  
ինձ ոչինչ չես պատմել: Կարծեմ, որ քեզ Կէնտուկիումն էլ այնպէս  
են սիրում, ինչպէս այստեղ:

—Յօժարութեամբ կ'կատարեմ բոլորը, ինչ որ կամենաք:  
Գերեվաճառը պէտք է գար ինձ վերցնելու խրձթիցը. ես նստած  
էի ձեռքերս գլխիս նեցուկ տուած ու ծնկների վերայ բաց դրած  
ունէի Սուրբ դիրքը. Քլոյէն կանգնած էր իմ հանդէպ և մենք եր-  
կուսս էլ լուռ էինք: Դեռ րողորովին չէր լրւացել և այդ պատ-  
ճառով երեխաները գեռ քնած էին միասին իրանց անկողնում—  
այսինքն անիւներաւոր մնտուկի մէջ:

Ես վերկացայ և գնացի նայելու զաւակներիս:

—Ա երջին անգամ, ասացի ես ինքս ինձ. Քլոյէն ձայն չէր  
հանում, այլ հարթուկը ձեռքին մեծ ջանքով հարթում էր իմ  
հաստ շապիկը, որը ամենելին հարթելու պէտք ըսնէր: Յետոյ յան-  
կարծ դաղարեց նա, նստեց ու սկսեց լալ. —Գիտեմ, ասում էր նա,  
որ հարկաւոր է հնագանգուել բայց՝ Աստուած իմ, այդ կարողութիւ-  
նից վեր է. երանի գիտենայի գոնէ թէ՛ ուր կ'տանեն քեզ, ողօր-  
մելի, և ինչպէս կ'վարվեն քեզ հետ: Թէպէտ տիրուհին խոստա-  
նում է, որ մէկ-երկու տարից յետոյ կ'գնէ քեզ և յետ կ'բերէ,  
բայց այնտեղից ոչոք չէ վերադառնում:

— Այնտեղ էլ Աստուած կայ, ինչպէս այստեղ՝ Քլոյէ՛:  
— Կարելի է, պատասխանեց Քլոյէն, բայց Աստուած երեմն  
մարդուն ծանր փորձանքների է հանդիպեցնում:

— Ես Աստուածոյ ձեռքին եմ, պատասխանեցի ես: Առանց Աստուածոյ  
կամքի ոչնչ չի լինի. գեռ շնորհակալ եմ Աստուածանից, որ նա չ'թոյլ  
տուեց քեզ և որդկերանցս էլ ծախել, այլ միայն ինձ: Դուք այս-  
տեղ ապահով կ'մնաք, իսկ ես հաւատացած եմ, որ ինչ որ պա-  
տահելու լինի ինձ հետ, նա ինձ կ'օգնէ: Սակայն մենք շնորհակալ  
պէտք է լինենք մեր պարոնից նորա արած բարութիւնների համար:

— Բարութիւններ, կրկնեց Քլոյէն, շատ քիչ եմ տեսնում  
բարութիւններ: Պարոնը քեզ պէտք է ծախէր, Թովմաս, իւր պարտ-  
քերը վճարելու համար. քեզ, որ այնպէս հաւատարիմ էիր նորան,  
որ նորա սեփական օգտի համար աւելի էիր աշխատում, քան թէ  
քո կնոջ ու ընտանիքի համար:

— Քլոյէ՛, պատասխանեցի ես, այդպէս մի խօսիր այս լուպէ-  
ներում, որ գուցէ վերջին կ'լինեն, որ անցկացնելու եմ քեզ հետ.  
մի խօսք անգամ չեմ ուզում լսել պարոնիս գէմ: ես նորան ձեռքե-  
րիս վերայ եմ ման ածել մանուկ ժամանակը. նա էլ դորա փոխա-  
րէն կերակրում էր Թովմասին, խրձիթ տուեց նորան, հազցնում էր  
նորան. նա միշտ բարի էր դէպի Թովմասը և ես համոզուած եմ, որ  
եթէ կարելի լինէր, չէր ծախի նորան:

Շուտով եկաւ տիկին Նելքին, որին Քլոյէն ակամայ կերպով  
աթոռ առաջարկեց, բայց տիկին Նելքին, շփոթուած լինելով,  
չնկատեց այդ. գունաթափ ու լուռ նայում էր նա մեզ վերայ, յե-  
տոյ ձեռքերով ծածկեց երեսը ու ասաց արտասուքը զսպելով:

— Թովմա՛ս, ես եկայ, որ....

— Ախ, Աստուած իմ, այդպէս մի լաց լինէք, տիկի՛ն, մի՛ լաց  
լինէք, ասաց Քլոյէն, նոյնպէս լաց լինելով և այսպէս ամենքս միա-  
սին, տիրուհին ու ստրուկները, արտասուք թափեցինք:

Այդ ժամանակ մտաւ խրձիթը գերեվաճառը և զայրացած գոչեց.

— Դէհ, նե՛զը, պատրա՞ստես:

Այդ միջոցին երեխաները զարթեցան և հասկացան, որ  
պէտք է բաժանուեն հօրից:

Այսաեղ Թովմասը չկարողացաւ զսպել արտասուքը:

— Ախ, ներիր ինձ, Թովմաս եղայր, գոչեց հեկեկալով նւան,  
ես այժմ զղջում եմ իմ անհամեստ հետաքրքրութեան համար:

— Ես շուտով կ'վերջացնեմ: օրիորդ, պատասխանեց Թովմասը.  
տիրուհին մօտեցաւ գերեվաճառին ու սկսեց տաք տաք խօսել նորա  
հետ: Իմ խեղճ գերդաստանը ձանապարհ դրեց ինձ մինչեւ այն  
սայլակը, որ պէտք է տանէր ինձ: Բոլոր նեղիները հաւաքուեցան  
հրաժարական ողջոյն առաջ Թովմաս եղայրը:

— Ո՛հ, ինչպէս ցաւում եմ, որ պարոն Գէորգը այստեղ չէ,  
ասացի ես:

Մենք ձանապարհ ընկանք. բայց մի քանի րոպէից յետոյ  
ձիու ոտնաձայն դիպաւ ականջիս. յանկարծ պարոն Գէորգը թռաւ,  
մտաւ սայլակի մէջ, արտասուքը աչքերում սկսեց զրկել ինձ ու  
աղաղակել:

— Ո՛հ, պարոն Գէորգ, սիրտս այժմ հանգիստ է, որ առանց  
ձեղ տեսնելու չ'գնացի, ասացի ես: Տեսնելով ոտքերս շղթայած, նա  
սկսեց աղաղակել:

— Ախ, զարհուրսնք, խայտառակութիւն, կ'սպանեմ իսկոյն  
գերեվաճառին: Բայց ես նորան հանդստացրի: Այն ժամանակ երի-

տասարդ պարոնս ասաց. «Թովմաս, ես քերեցի քեզ համար իմ սեփական դոլարը»:

Ես չեմ ուզում լնդունել բայց նա հարկադրեց ինձ. «Ես եմ պահանջում այդ, Թովմաս եղայր, ասաց նա, Քլոյէն ինձ խորհուրդ տուեց, որ արանք բանամնորա մէջը թել անցկացնելու համար, որ կարողանաս ծածուկ վզիդ կախ անել»:

Ես ասացի Քլոյէն, որ երբ ես մեծանամ, կ'պատուիրեմ անպատճառ կառուցանել Թովմաս եղօր համար լուսաւոր խրճիթ ծածկած տանիքով։ Ո՛չ, իմ ցանկութիւնն է Թովմասին բաղդաւոր տեսնելը»:

Երբ որ Գէորգը նստեց ձիու վերայ, ասաց. ես կարմրում եմ հայրենիքիս համար. ցտեսութիւն, Թովմաս եղայր, վստահ նայիր տմենի աչքերին. մի՛ կորցնիր զուարթութիւնդ։

—Թող օրհնէ քեզ Աստուած, ասացի ես, նայելով նորա վերայ քաղցրութեամբ։ Կէնտուկիում շատ քիչ մարդիկ կան քեզ նման։

Այստեղ կանգնեց Թովմասը. Ոչինչ եղակացութիւն չ'տալով այս տխուր պատմութեան մասին, Եւան սրբեց արտասուքով լիք աչքերը և Սուրբ գրքից կարդաց հետեւալը. «Ես տեսայ մի գետ, որի ջուրը փայլում էր որպէս բիւրել և որի հետ խառնվում էր բոց»։

—Թովմաս, ասաց Եւան յանկարծ կանգնելով ու ձեռքը մեկնելով դէպի լիճը, ահա նա է։

—Ի՞նչը, օրիորդ։

—Մի՞թէ չես տեսնում. Այնտեղ պատասխանեց աղջեկը, ցոյց տալով ջըերի թափանցիկ մակերեսոյթը, որի մէջ ցոլանում էր երկնքի ոսկեգոյն ծիրանին։

—Ես կարծում եմ, որ այդ ձշմարիտ է, օրիորդ, ասաց Թովմասը և երգեց. —Քանա՞ն, քո ծաղկեալ ափը մեր հայրենիքն է, թող հրեշտակը հրեղէն թերով նեգրին մօտեցնէ Աստուծոյ դարշապարին։

—Ո՞րտեղ է, քո կարծիքով, Թովմաս եղայր, սուրբ հայրենիքը կամ նոր Երուսաղէմը, հարցը Եւան։

—Ո՛հ, շատ բարձր, ամպերի տակը, օրիորդ։

—Կարծես ես նորան տեսնում եմ, նայի՛ր այն ամպերին, նոքա կարծես մարդարտէ դռներ լինեն. իսկ հեռուում ամենը, կարծես, ոսկէ է. երգի՛ր ինձ համար մեր սիրելի շարականը — Փայլուն հոգիները։

—Եւեգը երգեց իսկոյն. «Ես տեսնում եմ փայլուն հոգիներ յաւիտենական փառքի երջանկութեան մէջ, նոքա սպիտակ շորերով հագնուած՝ յաղթութեան շարականներ են երգում»։

—Տեսել եմ ես նրանց, Թովմաս եղայր, ասաց Եւան։

Թովմասը ո՛չ կասկած ցոյց տուեց և ո՛չ զարմացաւ. եթէ մինչև անգամ Եւան ասէր, թէ եղել է երկնքում, նա կ'հաւատար անպատճառ։

—Ես երաղիս մէջ շատ անգամ եմ տեսնում այդ հոգիները, Թովմաս եղայր, և աչքերը փակած, մեղմ ձայնով այս խօսքերը շնչաց. Երբ նրանք թռչում են օդի մէջ իրանց կանաչ արմաւենիքը ձեռքերին բռնած — այն ժամանակ բացվում են լուսաւոր երկնակամարի գռները»։

—Ես նրանց մօտ կ'գնամ, Թովմաս եղայր, ասաց նա։

—Ո՞ւր, օրիորդ։

Եւան կանգնեց և ձեռքով ցոյց տուեց երկնքի վերայ, իսկ

նորա զմայլուած աչքերը և երկար գանգուրները փայլում էին գերբնական շուքով մայր մանող արևի ճառագայթների տակ:

— Ե՛գնամ լուսաւոր հոգիների մօտ, թովմաս, և այդ շուտով կ'լինե: Վերջին խօսքերից թովմասը կարծես մի սաստիկ հարուած ստացաւ, նա մտաբերեց, որ արդէն կէս տարի է, ինչ որ նւայի ձեռքերը օրըստօրէ նիշարանում էին, որ նորա կաշէն թափանցիկ էր դառնում, շնչառութիւնը ծանրանում էր. առաջ նա ամբողջ ժամերով վազվզում էր այգու մէջ, իսկ այժմ հաղիւ մի քանի րոպէ կարողանում էր խաղալ: Բայց խեղջ նեղը չէր նկատել նորա ուժից ընկնելը. այո՛, նա այնքան սիրում էր նւային, որ չէր կարողացել նկատել նորա ուժաթափ լինելը: Այդ ժամանակ անտառի միջից լսուեցաւ օֆելեայի ձայնը.

— Ե՛ւա, նւա՛, ցող է թափվում, այսպիսի ժամանակ դու էլ չ'պէտք է դուրսը լինես: Թովմասն ու նւան շտապեցին տուն վերադառնալ:

Եւայի հօր եղբայր Ալֆրէտ Սէն Կլէրը եկել էր իւր տասն և երկու տարեկան որդի Հենրիկոսի հետ Բօնշարտրէն լՃի մօտ՝ եղբօր հետ մի քանի օր անցկացնելու: Հէնց որ այդ սեւաչեայ գեղեցիկ, կենդանի և դիւրագրդիու բնաւորութեամբ տղան տեսաւ իւր հօրելքօր աղջիկ նւային—իսկոյն սիրեց նորան:

Առքա մտածեցին ձիով զբոսանքի գնալ: Թովմասը բերեց նւայի սիրելի սպիտակ ձին, որը իւր տիլուհու պէս գեղեցիկ էր ու հեղու իսկ տասն և երեք տարեկան խառնածինը բերեց սև արաբական ձին, որին այն օրերում թանգ գնով նոր բերել էին տուել:

— Այս ի՞նչ կ'նշանակէ, Դօգօ, ծոյլ շուն, գոչեց հպարտ պատանին, նկատելով մի քանի բծեր ձիու կաշուի վերայ. դու այս առաւօտ ձին չե՞ս մաքրել:

— Վերեցէք, պարո՛ն, ես մաքրեցի, պատասխանեց խառնածինը խոնարհութեամբ. բայց ինքը կեղտոտուեցաւ:

Դօգօն գեղեցիկ տղայ էր, աշխայժ գէկով, սև մաղերով և համարե՛ա նոյնքան բարձրահասակ էր, որքան Հենրիկոսը: Հենրիկոսի արհամարհական խօսքերի պատճառով խառնածինի երակների մէջ սպիտակների արիւնը բորբոքուեցաւ և ասաց այլայլուած կերպով.— Պարոն Հենրիկոս....

Բայց Հենրիկոսը կտրեց Դօգօի խօսքը, երեսին մտրակի հարուած տալով. յետոյ թեքից բռնելով, ստիպեց չռքել և ծեծեց նրան այնքան, մինչև որ ինքը յոդնեցաւ:

— Ինչո՞ւ ես դու այդպէս կոպիտ ու տմարդի վարվում խեղջ Դօգօի հետ, ասաց նւան, այս տեսարանի վերջը վրայ հասնելով:

— Այսպի՛տ, տմարդի՛. ի՞նչ ես ուզում դորանով ասել, սիրելի նւա:

— Այդպիսի արարմոնքից յետոյ ինձ «սիրելի նւա» մի՛ անուանիր:

— Բայց Դօգօն միշտ սուտ է խօսում:

— Եթէ սուտ է խօսում այդ այն պատճառով է, որ վախենում է քեղանից. դու նորա հետ վատ վարուեցար առանց որ և է պատճառի:

Այդ ժամանակ Դօգօն երկու ձիաներն էլ բերեց նրանց մօտ:

Երիտասարդ խառնածինը նւայի ձիու մօտն էր կանգնած, երբոր Հենրիկոսը, ձիու սանձը արձակելով, տուեց իւր գեղեցիկ հօրաքրոջ աղջկան: Նւան, դարձնելով երեսը, ասաց քաղցրութեամբ.— Դու բարի տղայ ես, Դօգօ, շնորհակալ եմ քեղանից:

Այս խօսքերը վերաւորեցին Հենրիկոսին:

Երբ որ երեխաները վերադառնում էին պրօսանքից նւան  
հարցրեց Հենրիկոսին.

— Ինչո՞ւ չես սիրում Դոդոին:  
— Դոդոին սիրել, ճշաց պատանի կալուածատէրը. յուսով եմ,  
սիրելի նւա, որ դու էլ չես սիրում գերիներիդ:

— Ընդհակառակն, ես նրանց սիրում եմ:  
— Ինչպէս ծիծաղելի է:

Տիկին ՊԱԼՄԵՐ. Այսօր այսքանը բաւական է. վաղը մենք կը  
ծանօթանանք մի չար բնաւորութիւն ունեցող նեղի հետ, որը  
վերջը կ'սկսէ հետաքրքրել ձեզ և որին կ'հաւանէք:

ԵԴՈՒԱՐԻ. Ես հաւատացած եմ, մայրիկ, որ դուք Տօփսի մա-

սին էք ասում, որին մօրաքոյրս իսկական սատանայ էր անուանում:  
— Վաղը, որդիք, ես չեմ սիրում պատմել առաջուց այն, ինչ

որ մտաղիր ենք կարդալ:



### ՎԵՅՆԻՐՈՐԴ ԱՌԱԽՈՑ

#### ՏՕՓՍԻ



ԻԿԻՆ ՊԱԼՄԵՐ (կարդալով). Մի ան-  
գամ երբ Օֆելիան առաւօտից սկսուած  
զբաղուած էր տնտեսական գործերով,  
սանդուղքների վերայ լսուեցաւ Սէն Կէրի  
ձայնը.

— Յած եկէք այստեղ, Օֆելիա, ձեզ  
մի բան պիտի ցցց տամ:

Այս մի բանը մի ութ—ինն տարեկան նեղը էր,  
որի կոլոր ու անհանդիստ աչքերը անդադար երկչոտ  
հետաքրքրութեամբ այս ու այն կողմն էին վազում: Նորա զարման-  
քից կիսաբաց բերանի մէջ երկում էին երկու շարք սպիտակ ատամ-  
ներ, նորա սև մազերը, որ բաժանած էին անթիւ հիւսերի՝ ձագա-  
ռի մազերի էին նմանում: Նորա սև երեսի վերայ նկարվում էին  
միւնդն ժամանակ և՝ սրամառութիւն և՝ չարամտութիւն, որը աշ-  
խատում էր ծածկել երեսի տխուր արտայայտութեամբ: Նա հա-

գած էր կոպիտ կտաւէ շոր և կանդնած էր ուղեղ համեստութեամբ  
ձեռքերը կրծքի վերայ խաչած:

Չ'նայելով սորա այսպէս հանդարա զիրքին, Օֆելեան սար-  
սափ զգաց, ենթադրելով, որ այս էակի մէջ նմանութիւն կայ սա-  
տանայի կամ չար հոգւոյ հետ:

— Ճշմարիտ, ես չեմ հասկանում, Սէն Կէր, թէ ինչո՞ւ ես բե-  
րել ինձ մօտ այս երեխային, ասաց Օֆելեան, աչքերը երկինքը  
բարձրացնելով:

— Նորա համար, որ դու պարագես դորա կրթութեամբ,  
պատասխանեց Սէն Կէրը. ես քեզ ճանաչում եմ, աւելացրեց նա-  
ծանրութեամբ, և համոզուած եմ, որ դու դորան առաքինութեան  
ճանապարհի վերայ կ'կանգնացնես:

Տօփսին շուտով նշանաւոր անձն դարձաւ Սէն Կէրի ընտա-  
նիքի մէջ: Մի օտարօտի ու անզպելի ձգտումն ունէր նա զէպի զա-  
նազան չարութիւններ, ծամածութիւններ ու ծալքալի խեղկա-  
տակութիւններ: Նա կարող էր փոփոխակի և՝ պարել և՝ թռչո-  
տալ երգել շուացնել և իւր ձայնը ամեն տեսակ հնչիւններին նը-  
մանեցնել: Ազատ ժամանակները տան բոլոր մանուկները նորա յե-  
տեից էին ընկած և անդադար հետաքրքրվում էին ու զուարձա-  
նում նորա խաղերով. մինչեւ անզամ ինքը եւան էլ, գրավուած  
նորա կապիկութիւններով, շատ անդամը բերան բաց նայում էր  
նրա վերայ հետաքրքրութեամբ:

Տօփսին երեխանց կուռքը դառնալով, տան բոլոր ծառաներին  
ատելի ու արհամարհելի դարձաւ: Նորա դէմ խօսք կապեցին. բայց  
մի՛ վրդովիք առաջուց, որովհետեւ փոքրիկ նեղը ծածուկ վրէժ-  
ինդրութեամբ հանում էր իւր ոխը: Հէնց մէկը կ'զանդատի նորա

վերայ թէ՝ կոտրել է կամ պատռաւել է մի բան, խկոյն մեղադրող-  
ներից մէկի մի զյութ թանկագին օղեր, կամ մի գեղեցիկ շոր էր կոր-  
չում, կամ թէ այնպէս կեղտուավում, որ ոչինչ բանի պէտք չէին գա-  
լիս: Բոլոր նորա թշնամիներին՝ կանանց և թէ տղամարդիկներին մի  
որևէ գեղախտութիւն էր պատահում—կամ դիպչում էին եռ եկած  
ջրով կաթսային և այրվում էին, կամ թէ յանկարծ թափվում  
էր նորանց զլիին կեղտոտ ջուր և ապականում շորերը:  
Խոկոյն քննութիւն էր բացվում, բայց յանցաւորին չէին կարողա-  
նում գտնել: Նատ անգամ կանչուեցաւ Տօփսին Օֆելեայի առաջ  
գատուելու, բայց բոլոր հարցերին նա այնպէս ծանր ու անմեղ կեր-  
պով էր պատասխանում, որ միշտ ազատվում էր պատժից. մանա-  
ւանդ որ նորա վերայ ոչոք հաստատ և ակներեւ մեղադրանք չէր  
գտնում: Մի անգամ պատշտամբում զահաւուակի վերայ պառկած էր  
Սէն Կէրը և ծխում էր, երբ նորա ականջին հասան Օֆելեայի  
անեակից եկող յանդիմանութիւնների ու բարձր աղաղակի ձայներ:

— Եւ ի՞նչ նոր բան է արել այդ սատանայ Տօփսին, հարցրեց  
Սէն Կէրը. կասկած չ'կայ, որ նա պէտք է լինի այդ աղաղակների  
պատճառը:

Այդ ժամանակ Օֆելեան սաստիկ զայրացած դուրս եկաւ  
պատշտամբի վերայ, քարշ տալով իւր յետեից Տօփսիին:

— Ի՞նչ է պատահել քոյրիկ, հարցրեց Սէն Կէրը:

— Այն, որ այլևս չեմ կամենում տանջուել այս երեխայի  
պատճառով—համբերութիւնս հատաւ: Նս սորան փակեցի սենեակի  
մէջ և պատուիրեցի սովորել մի շարական, բայց հէնց որ ես դուրս  
եկայ սենեակից, նա խոկոյն վերթոցրեց բանալին, որը ես մեծ զգու-  
շութեամբ պահել էի, բաց արաւ պահարանս, հանեց այնտեղից իմ

գլխարկի ամենալաւ ժապաւէնները ու կտրտեց իւր տիկինի շրջազգեսաների համար. ես առաջին անդամ եմ տեսնում կեանքիս մէջ այսպիսի անկարգութիւն։

— Այստեղ արի՛, կապիկ, ասաց Սէն Կէրը Տօփսիին, նշան տալով, որ մօտենայ։

Տօփսին մօտեցաւ. նորա կողոր ու չար աչքերը փայլում էին երբեմն երկիւղով, երբեմն կամակորութեամբ։

— Ինչո՞ւ այդպէս վատես պահում քեզ, հարցրեց Սէն Կէրը, որ հազիւ էր կարողանում բռնել ծիծաղը, նայելով նորա խեղկատակ կերպարանքի վերայ։

— Ես այսպիսի չար սիրտ ունեմ, պատասխանեց Տօփսին հանդարտութեամբ. տիկին Օֆելիան էլ այսպէս ասաց։

— Դու չգիտե՞ն միթէ, թէ ինչպէս խնամք է տանում քեզ վերայ Օֆելիան և ինչքան ջանք է գործ դնում քեզ համար, իսկ նա այժմ էլ չէ իմանում, թէ ինչ անէ քեզ հետ, դու ինքդ լուցիր այդ։

— Ճշմարիտ է, պարոն, իմ առաջուայ տիրուհին էլ միւնոյնն էր ասում. իհարկէ, նա աւելի սաստիկ էր ծեծում ինձ, կտրտում էր մաղերս, դըսիս դռներին խփում, բայց չկարողացաւ ուղղել ինձ. եթէ մինչեւ անդամ արմատից հանէր բոլոր մաղերս, դարձեալ չէր կտրող ուղղել, ես շաա չար աղջկէ եմ. ո՛հ, Տէր իմ Աստուած, ինչպէս չար եմ. բայց ես հօ ոչ այլ ինչ եմ, եթէ ոչ մի նեգր։

Սէն Կէրն ու Օֆելիան լուռ միմեանց երեսին նայեցին, իսկ նւան, որ լսում էր այս խօսակցութիւնը, լուռ թեամբ նշան արեց Տօփսին և երկու աղջիկները միասին դուրս գնացին ապակեայ Փոքր սենեակը, ուր սովորաբար Սէն Կէրը ընթերցանութեամբ էր պարապում։

— Հետաքրքիր է իմանալ, թէ ի՞նչ կանէ նւան նորա հետ, ասաց Սէն Կէրը Օֆելիային և տարաւ նորան սենեակի ապակեայ դրան մօտ։

Փոքր ինչ բարձրացնելով վարագոյրը, նոքա տեսան, որ երկու աղջիկները նստած էին յատակի վերայ. Տօփսին իւր յանդուգն, ծիծաղաշարժ ու անվզով դէմքով, իսկ նւան արտասուալից աչքերով, որ արտայայտում էին նորա քննքոյշ սրտի զգացմոնքը, կարեկցութեամբ ու սիրով լցուած։

— Ինչո՞ւ այդպէս չար ես, Տօփսի, ինչո՞ւ չես աշխատում ուղղուել մի՞թէ ոչոքին չես սիրում, հարցնում էր նորան նւան։

— Ես չեմ իմանում՝ ի՞նչ բան է սէրը. ես սիրում եմ քաղցրելիններ, էլ ո՛չինչ պատասխանեց Տօփսին։

— Բայց դու հօ սիրում ես հօրդ ու մօրդ։

— Ես ամենեին չեմ ունեցել ո՛չ հայր և ո՛չ մայր, դուք այդ գիտէք, ես արդէն ասել եմ ձեզ։

— Այո՛, յիշում եմ, տիրութեամբ ասաց նւան. բայց չունե՞մ գոնէ քոյր, եղայր, մօրաքոյր....

— Ամենեին ոչոք չունեմ և չեմ էլ ունեցել։

— Բայց, Տօփսի, եթէ որ դու ցանկանայիր բարի լինել...

— Եթէ ես կամենայի մինչեւ անդամ բարի լինել հօ դարձեալ միւնոյն նեգրը կ'ինեմ. եթէ ես կարողանայի հանել վրայից կաշին ու սպիտականալ, այն ժամանակ կ'փորձէի։

— Բայց քեզ, կարելի է սիրել չ'նայելով որ սև ես, Տօփսի. եթէ դու բարի լինէիր, տիկին Օֆելիան կ'սիրէր քեզ։

Այս վերջին խօսքերի վերայ Տօփսին դառնութօամբ ծիծաղեց։

— Դու չե՞ս հաւատում, հարցրեց նւան:

— Ո՛չ նա ինձ չէ սիրում, որովհետեւ նեզը եմ նա աւելի շուտ կ'սիր է գորտին, քան թէ ինձ: Ոչոք չէ սիրում սեխն, սեղոչնչ լաւ բան չի կարող անել. ես—միայն ծիծաղում եմ դորա վերայ, աւելացրեց նա շուացնելով:

— Ո՛չ, Տօփսի, խեղճ աղջիկ, ես քեզ սիրում եմ, ասաց նւան կարեկցութեամբ, և զնելով իւր փոքրիկ սպիտակ ձեռքը նորա ուսի վերայ, աւելացրեց.— Ես քեզ սիրում եմ նորա համար, որ դու չունես ո՛չ հայր, ո՛չ մայր, որովհետեւ դու խեղճ աղջիկ ես առանց ընտանիքի և առանց օգնութեան. սիրում եմ քեզ և կ'ցանկանայի, որ լինես բարի. ես շատ հիւանդ եմ, Տօփսի, ես երկար չեմ ապրի, և շատ ցաւում եմ, որ քեզ այդպէս չար եմ տեսնում. բարի եղիք իմ սիրոյս համար, ինձ շատ քիչ ժամանակ է մնում քեզ մօտ անցկացնելու:

Մի վայրկենումնեզրի սե ու կոլոր աչքերը լցուեցան արտասուքով, որոնք գլորուեցան նւայի ձեռքի վերայ: Խելով իւր տիրուհու բերանից բարեկամական ու քնքոյշ խօսքեր, Տօփսին գլուխը կախեց ծնկների վերայ և սկսեց ողբաշ ու լաց լինել, իսկ նւան՝ խոնարհած նորա վերայ նմանում էր մի հրեշտակի, որ եկել էր յանցաւորին փրկելու համար:

— Խեղճ Տօփսի, մի՞թէ դու չ'դիտես, որ Յիսուսը մեզ ամենիս միատեսակ սիրով է սիրում, ասում էր նւան.— Նա քեզ նոյնքան է սիրում, որչափ և ինձ: Բայց ո՛չ, նա քեզ ինձանից աւելի է սիրում, որովհետեւ նա անհամեմատ բարի է մարդկանցից: Նա քեզ կօգնէ, որ ուղղուես, և վերջը կ'գնաս երկինքը ուր և կ'մնաս յաւիտեան հրեշտակների մէջ: Մտածիր մի փոքր սորա վերայ,

Տօփսի, մտածիր, որ դու կարող ես դառնալ այն լուսաւոր հոգիներից մէկը, որոնց Թովմաս եղբայրը փառաբանում է իւր շարականների մէջ:

— Ո՛չ, իմ սիրելի օրիորդ, ասաց ոգեորուած Տօփսին, ես կաշխատեմ բարի լինել, անպատճառ կաշխատեմ, առաջ ամեննեխն չեմ մտածել դորա վերայ:

Աէն Կէրը ծածկեց վարագոյր:

— Իմ նազելի նւան յիշեցնում է ինձ իմ մար, ասաց նա օֆելեային. նա ինձ միշտ ասում էր՝ եթէ ուզում ես աչք տալ կոյրին, կանչեր մօտդ ու ձեռքդ դիր նորա վերայ:

— Շատ լաւ, ասաց Օֆելեան, բայց ես միշտ ատելութիւն էի զգում զէպի այդ նեզրները, ես վախենում էի մինչեւ անգամ մօտենալ այդ աղջկան:

— Բայց նւան չէ վախենում:

— Ո՛չ, նւան ուրիշ է, նա շատ բարեսիրտ է. վերջապէս, աւելացրեց նա մտածելով. Նւայի վարմունքը պատուիրած է մեզ Աստուածաշնչից:

— Ես հոգով ցանկանում եմ նմանուել նւային, և սկսում եմ հաւատալ որ նա այսօր ինձ փրկարար դաս տուեց, որին պէտք է հետեւ:

— Այս առաջին անգամը չէ, որ մանկական վարմունքը ծառայում է իրեւ օրինակ, ասաց Սէն Կէրը:


Տիկին ՊԱԼՄԵՐ. Որովհետեւ վաղուայ ընթերցանութիւնը աւելի երկար կ'շարունակուի, դորա համար հարկաւոր է սովորականից մի կէս ժամ առաջ հաւաքուել:

ՍՕՅԻԱ. Առաւել լա՛ւ, մայրիկ: Իսկ ե՞րբ, վերջապէս, կիմանանք Թովմասի աղատութեան մասին:

ԵԳՈՒԱՐԴ. Դու զիտես, Սօֆիա, թէ ի՞նչ ասաց մայրը մեզ  
հետաքրքրուելու համար:

ՃԵՂԻՆԵ. Եգուարդը ճշմարիտ է, թող բաւականանք այսօ-  
րուայ պատմութեան վերայ զըռոցելով, որովհետեւ ընթերցանու-  
թիւնը չ'պէտք է լսել միայն զուարձութեան համար. այնպէս չէ,  
մայրիկ:

ՏԻԿԻՆ ՊԱԼՄԵՐ. Անկասկած, աղջեկս, բայց քրոջդ անհամ-  
բերութիւնը ներելի է, որովհետեւ նա բղխում է սրտի բարութիւնից:  
Այսպէս ուրեմն մինչեւ վաղը, սկզբելեքս:



## ԵՕԲԵՐՈՐԴ ԱՌԱԽՈՑ

ԵՐԿՈՒ ՏԵՍԱԿ ՄԱՀ:



ԻԿԻՆ ՊԱԼՄԵՐ. Երեկուայ կարդացած տը-  
խուր անցքերը, որ իմացանք նւայի ու-  
ժաթափ լինելու մասին, երևի պատրաս-  
տեցին ձեզ լսելու այսօրուայ ցաւալի  
պատմութիւնը: Այսօր մենք տեսնում ենք  
նւային մօր կողքին մահճակալի վերայ  
պառկած՝ խօսում է ծանր կերպով նորա հետ: Յանկարծ խօսեց նա  
արագութեամբ.

— Ես կ'ցանկանայի, որ մազերս կտրեն, մայրիկ:

— Ինչո՞ւ:

— Կամենում եմ, մինչեւ բոլորովին չէ հատել ուժս, բարեկամներիս  
մէջ բաժանել. կանչեցէք, խնդրեմ, այստեղ հօրաքրոջս:

Տիկին Սէն Կէրը ձայն տուեց Օֆելիային:

Եւան, Օֆելիային տեսնելով, շարժեց իւր երկար գանգուր-

ները, կարծես, զուարձանալով նորանցով, և ասաց ժպտալով:

— Իմ հօրաքոյր, խուզեցէք գառնուկին:

— Այդ ի՞նչ կ'նշանակէ, հարցրեց Սէն Կէրը ներս մտնելով, որ շտապով պառւղներ էր բերում աղջկայ համար:

— Ուզում եմ, հայրիկ, որ հօրաքոյրս մազերս կտրէ, որովհետեւ շատ խիտ են նոքա և շոգեցնում են ինձ. բացի դորանից այդ կտրած մազերս ուզում եմ բարեկամներիս մէջ բաժանել որպէս յիշատակ:

Օֆելիան վերադարձաւ մլրատը ձեռքին:

— Միայն զգոյշ, քոյրիկ, խնդրեմ բոլորովին չ'փշացնես մազերը, ծայրերիցը միայն կտրի՛ր, ես շատ եմ սիրում նայել նւայի գանգուրներին:

— Ա՛ն, հայրի՛կ....ասաց տիսրութեամբ նւան:

— Այսո՛, աղջեկս, պէտք է պահպանել մազերդ, մինչեւ ես և դու միասին կը գնանք հօրելորդ մօտ. դու կայցելես Հենրիկոսին, աւելացրեց Սէն Կէրը ժպտալով:

— Ես այնտեղ երբէք չեմ գնայ, սիրելի հայրիկ, հաւատացէք ինձ, որ ես հեռանում եմ դէպի աւելի լաւ աշխարհը: Մի՞թէ չէք նկատում, որ օրըստօրէ նուազում եմ:

— Ինչո՞ւ դու անդադար այդ ես կրկնում, սիրելի նւա:

— Որովհետեւ ճիշտ այդպէս է, հայրիկ:

Յետոյ նշանացի արեց հօրը, որը եկաւ և նստեց նորա մօտը:

— Հայրիկ, ասաց նա, զգում եմ, որ ոյժերս տկարանում են, գուցէ շուտով պէտք կ'լինի ուղեղորուել....շատ բան ունեմ թէ ասելու և թէ անելու. տեսնում եմ, որ ձեզ վրդովում է, երբ ես սկսում եմ խօսել այդ մասին. բայց, ի՞նչ արած, ժամանակը չի

ներում, ես չ'պէտք է նորան կորցնեմ. հայրիկ, ես խկոյն ամենը կ'կարգադրէի, եթէ դուք թոյլ տայիք:

— Թոյլ եմ տալիս, աղջեկս, պատասխանեց Սէն Կէրը, մի ձեռքով ծածկելով իւր երեսը, իսկ միւսով բռնելով աղջկայ ձեռքը:

— Ես կ'կամենայի, որ բոլոր մեր ստրուկները հաւաքուէին այս տեղ ես ուզում եմ նրանցից իւրաքանչիւրին մի բան ասել:

Ստրուկները մտան թէ չէ, նւան նստեց անկողնի մէջ և ուղեց նրանց վերայ իւր արտասուալից աչքերը: Ստրուկները նայում էին միմեանց երեսին, ախ էին քաշում ու գոււխները կախ գցում: Կարծես ամենի սրտին պատել էր երկիւղն ու տրտմութիւնը. կանայքը երեսները ծածկում էին գոգնոցով:

— Ես կանչեցի. ձեզ, սիրելի բարեկամներ, որովհետեւ սիրում եմ ձեզ, ասաց նւան: Այսո՛, սիրում եմ ձեզ ամենիդ և ցանկանում եմ, որ միշտ յիշէք այն՝ ինչ որ ես ուզում եմ ասել ձեզ....նուտով ես թողնելու եմ ձեզ. մի քանի շաբաթից յետոյ դուք այլևս չէք տեսնի ինձ:

Այստեղ նորա խօսքը կտրեցին ստրուկները իրանց լացով ու հեծեծանքով: Մի ըստէից յետոյ նա շարունակեց աւելի ազդու ձայնով.

— Եթէ ինձ սիրում էք, մի՛ ընդհատէք ինձ. լսեցէք. ես ուղում եմ խօսել ձեզ հետ ձեր հոգիների վերաբերութեամբ: Սիրելի բարեկամներ, շատերը ձեզանից շատ սակաւ են մտածում այդ մասին, առաւել հոգ տանելով աշխարհային կեանքին. բայց կայ սորանից անհամեմատ լաւ կեանք, ուր գտնվում է Տէրն մեր Յիսուս Քրիստոսը, ուր գնում եմ ես և յոյս ունեմ այնտեղ բնակուել. ուր դուք էլ կարող էք արժանանալ մտնելու: Բայց եթէ ուզում էք

գնալ այս լաւ աշխարհը, չպէտք է մնալ ծուլութեան, անդործութեան ու յանցանքի մէջ, պէտք է ճշմարիտ քըլիստոնեաներ լինէք. երբէք չպէտք է մոռանաք, որ ձեզանից ամեն մէկը պարտաւոր է անարատ լինել. յաւիտեան անարատ: Զեր պարապ ժամերում լրսեցէք Աւետարանի խօսքերը: Ես ձեզ համար աղօթեցի և յուսով եմ, որ մենք ամենքս կ'սեսնուենք միմեանց հետ այնտեղ՝ բարձր երկնքում:

Այս խօսքերի վերայ բոլոր նեղրները առանց բացառութեան թէ մանուկները, թէ ծոյլերն և թէ անկարգները—ամենքը սրտները շարժուած սկսեցին բարձր ձայնով ողբալ, իրանց երեսները ծածկելով:

—Գիտեմ, որ դուք ամենքդ էլ սիրում էք ինձ, ասաց Եւան ձայնը բարձրացնելով:

—Թո՞ղ օրչնէ քեզ Աստուած, պատասխանեցին ստրուկները արտասուելով:

—Գիտեմ ձեր մտերմութիւնը, շարունակեց աղջեկը, և դորա համար ուզում եմ թողնել իբրև իմ սիրոյ գրաւ, ի յիշատակ Եւայի ամեն մինիդ մի փունջ մազ: Ամեն անդամ երբ կ'նայէք նորա վերայ, նա ձեզ կ'յիշեցնէ, որ ես ձեզ սիրում էի և որ Աստուծոյ կամքով երկինքը գնացի, ուր ձեզ ամենիդ սպասում եմ:

Դրժուար է նկարագրել այստեղ այսպիսի հրաժարականից յառաջացած տիսուր տեսարանը: Նեղրները, ողբալով ու լաց լինելով, հաւաքուեցան սիրելի աղջկայ շուրջը, որ ստանան նորա ձեռքից նորա սիրոյ վերջին գրաւականը: Նոքա հերթով չոքում էին ծնկների վերայ ու համբուրում էին նորա հագուստի փեշերը, իսկ ծերերը իրանց բարի և առաքինի բնաւորութեան համեմատ՝ միխթարական

խօսքեր էին ասում նորան, աղօթք անում նորա համար և օրհնում նորան:

Օֆելիան, երկիւղ կրելով թէ մի գուցէ վըդովմունքից աւելի նուազի փոքրիկ աղջեկը, նշան էր տալիս նեղրներին, որ երբ ընծան ստանան, իսկոյն դուրս գնան սենեակից:

Վերջապէս մնացին միայն թովմասն ու Մամմին:

—Ահա քեզ թովմաս եղայր, ամենալաւ խոզոպիքս, ասաց Եւան. ո՛հ, ինչպէս ուրախ եմ, որ ես քեզ կ'տեսնեմ այնտեղ՝ երկնքում, որովհետեւ ես հաւատացած եմ, որ դու այնտեղ՝ կ'լինես: Իսկ դու Մամմի, սիրելի Մամմի, քեզ հետ էլ կ'տեսնուեմ, ասաց աղջեկը, փաթաթուելով իւր դայեակի վզին:

Հանդարտ կերպով հեռացնելով թովմասին ու Մամմիին սենեակից, Օֆելիան ուրախանում էր, որ հիւանդը մի փոքր կ'հանգատանայ, երբ յանկարծ յետ նայեց ու նկատեց Տօփսիին անկողնում կանդնած:

—Դո՞ւ որտեղից եկար այստեղ, հարցրեց նա զարմացած:

—Ես վաղուց արդէն այստեղ էի, պատասխանեց Տօփսին, աչքերը սրբելով. ո՛հ, սիրելի օրիորդ, ճշմարիտ է, ես շատ չար էի, բայց տուէք ինձ էլ ձեր մազեց մի փոքրիկ մաս:

—Անպատճառ քեզ էլ կ'տամ, խեղճ Տօփսի, ահա վերցրու, ամեն անդամ երբ նայես սորա վերայ, միտք բեր, որ ես սիրում էի քեզ ու ցանկանում էի, որ բարի լինես:

—Ո՛հ, օրիորդ, մեծ եռանգով աշխատում եմ, բայց բարի լինելը—այնպէս գժուար է, ինձ համար բոլորովին անսովոր բան է դա:

—Տէրն մեր Քրիստոսը տեսնում է քո բարի ցանկութիւնը, Տօփսի, նա կօգնէ քեզ:

Այս խօսքերը լսելով, Տօփախն երեսը դոդնոցով ծածկեց և դուրս գնաց սենեակից կրծքին պինդ կպցրած իւր սիրելի տիրուհու մազերի հիւսը:

Այս անցքից մի քանի օր անցած՝ Օֆելիան, որ ամբողջ դիշեր չէր հեռացել Եւայի մօտից, նկատեց, որ հիւանդի առողջութիւնը սովորականից վատ դարձաւ:

Վէս զիշերին նա կամաց Սէն Կէրի դուռը բաղլսեց:

—Եղբայրս, Եկ այստեղ, ասաց նա:

Երբ այս լուրը տարածուեցաւ տան մէջ, բոլոր ստրուկները ոտքի կանգնեցան, շարժողութիւնը ընդհանուր եղաւ. ամենքը եկան հաւաքուեցան պատշգամբի վերայ և արտասուալից աչքերով նայում էին ապակէ դուներից իրանց փոքրիկ տիրուհու վերայ:

Սէն Կէրը ոչինչ չէր տեսնում ու չէր լսում, թէ ինչ էր կատարվում իւր շուրջը. նորա ուշադրութիւնը կենտրօնացած էր նազելի աղջկայ դէմքի վերայ. խոնարհեցնելով գլուխը իւր զաւակի վերայ—շշնջաց ականջումը. «Եւա, սիրելի Եւա»:

—Ո՛չ, երանի թէ մի անգամ էլ կարողանայ զարթնել, երանի թէ մի անգամ էլ ճայն հանէ:

Հիւանդի մեծ աչքերը բացուեցան, ժպիտը խաղաց շրմունքների վերայ, գլուխը բարձրացրեց և աշխատում էր մի բան ասել:

—Ճանաշնում ես ինձ, Եւա, հարցրեց Տայրը աննկարագրելի տիրութեամբ:

—Աիրելի հայրիկ, ասաց աղջեկը, յետոյ մեծ դժուարութեամբ կարողացաւ իւր փոքրիկ ու նուազ ձեռքերը փաթաթել հօր վզով, որոնք համարեա իսկոյն ցած ընկան:

Բարձերի վերայ պառկած՝ անշարժ մնաց աղջեկը. Նորա մեծ

ու թափանցիկ աչքերը ուղղած էին դէպի երկինքը:

Բայց ի՞նչ էին արտայայտում այժմ այն աչքերը, որ այնքան յաճախ խօսում էին երկնքի վերայ. երկրային աշխարհը ու նորա չարչարանքները էլ չ'կային նորա համար, բայց նորա դէմքի արտայայտութիւնը այնպէս պարզ էր ու խորհրդաւոր, որ ամենքը ակամայ պահում էին ցաւակցութեան արտասուքը, ամենքը լուռ ու անշունչ կերպով շրջապատել էին նորան:

—Եւա, ասաց մեղմ ձայնով Սէն Կէրը:

Եա չ'պատախանեց:

—Ո՛չ, Եւա, շարունակեց հայրը, ասա մեզ, ի՞նչ ես աեմում:

Մանկան երեսը փայլեցաւ հանդիսաւոր ժպիտով, յետոյ մեղմ ու կցկուր ձայնով շշնջաց. «Սէր, ցնծութիւն, խաղաղութիւն. վերջին խօսքերին հետևեց խուլ հառաջանք և աւանդեց հոգին:

Այդ անցքից մի քանի շաբաթ անցած՝ մի երեկոյ Սէն Կէրը սրճատուն գնաց լրացիր կարդալու: Նոյն ժամուն անսպասելի կերպով երկու հարբած մարդկերանց մէջ ծեծ ու կոիւ բացուեցաւ. մի քանի այցելուներ և սոցա թւում Սէն Կէրը կամենում էին բաժնել նրանց ու հանդարտացնել. յանկարծ այս հարբածներից մէկը մահու հարուած տուեց Սէն Կէրի կրծքին:

Տուն տանելու ժամանակ ցաւից և արեան հոսումից Սէն Կէրը ուշաթափուեցաւ, բայց Օֆելիայի իննամքը կենդանութիւն տուեց նորան, նա բաց արաւ աչքերը, արագութեամբ նայեց Օֆելիայի ու ծառաների վերայ և վերջապէս նորա աչքն ընկաւ իւր մօր լուսանկար պատկերը:

Թովմասը նորա մօտ չոքած, ջերմ սրտով աղօթք էր անում. Սէն Կէրը պինդ բռնեց նեղրի ձեռքը ու տխուր կերպով նայեց

նորա երեսին, բայց ոյժ չունեցաւ մի բառ անգամ արտասամելու :  
Այս դրութեան մէջ մնաց նա մի քանի վայրկեան, յետոյ բացեց  
աչքերը և երեկի մի տեսիլ երևեցաւ նորան, որովհետեւ գոչեց.

—Մայրիկս:

Եւ այսպէս վախճանեցաւ:



ՈՒԹԵՐՈՐԴ ԱՌԱԽՈՏ

ՄԱՐՏԻՐՈՍՈՒԹԻՒՆԸ: ԵՐԻՏԱՍԱՐԴ ՊԱՐՈՆԸ:

Ա.Զ.Ա.ՏԻ ԶԸ:



ստեցէ՞ք և ուշաղրութեամբ լսեցէ՞ք, սի-  
րելի որդիք, ասաց տիկին Պալմէրը, որով-  
հետեւ այսօր մենք վերջին անգամն ենք  
հաւաքվում Թովմաս եղբօր տնակի  
առիթով։  
Հեղինե. Խոստովանվում եմ, մայրիկ, որ  
Եւայի և Սէն Կէրի մահուան տիսուր  
պատմութիւնից յետոյ, որքան որ մօտենում ենք զբքի աւարտելուն,  
այնքան անհանգստութիւն եմ զգում։

ՍՈՅԻՆ. Ես էլ միւնցին եմ զգում, բայց հիմա աւելի քան  
երբէք վախենում եմ Թովմասի ապագայ կեանքի համար։

—Ինչո՞ւ պէտք է վըդովուել՞ մի՞թէ չ'զիտենք մենք նորա ձշմա-  
րիտ հաւատող. կասկած չ'կայ, որ Թովմաս եղբայրը ինչ փորձանք-  
ների որ հանդիպի, յաղթող կ'հանդիսանայ։

ՏԻԿԻՆ ՊԱԼՄԵՐ (կարդալով) Սէն Կէրը կամենում էր Թովմասին

ստրկութիւնից ազատել բայց, ինչպէս տեսանք, յանկարծ անսպասելի կերպով վըս հասաւ մահը: Այս անգամ մեր խեղճ թովմաս եղայրը ընկաւ Սիմեօն Լեզրի անունով մի անաստուած, կատաղեւ իւր ստրուկների հետ բարբարոսաբար վարուող մարդու ձեռքը: Շուտով նկատելով որ թովմասը աստուածասէր է, Լեզրին սկսեց հայհոյել ծեծելու ծաղըել նորան:

Լեզրիի կատաղութիւնը աւելի այն ժամանակ սաստկացաւ, երբ թովմասը չընդունեց Լեզրիի առաջարկած վերակացուի պաշտօնը, որով ոչ թէ միայն պէտք է նայէր նեզրների աշխատելուն, այլև պատահած ժամանակը պէտք է ծեծէր նորանց: Կատաղեցաւ անգութ կալուածատէրը, հրամայեց իւր նեզրներից երկուսին, որոնք անգթութեան կողմից գերազանցում էին իւրեանց պարոնից, որ հնազանդութիւն սովորեցնեն ու պուրիտանին—ինչպէս որ նա ծաղըլով անուանում էր թովմասին: Սամբօն և Կվիմբօն (այսպէս էին Լեզրիի դահիճների անունները) ուրախ ժպիտը երեսներին սկսեցին գործը և փոքր ժամանակում զօրեղ թովմասին մեռած դիակ դարձրին և նորա մարմինը սարսափելի վերքերով ծածկեցին:

— Տղայք, դուք ձեր այդ ծառայութեան համար վարձատրութեան արժանի էք, ասաց նորանց Լեզրին պատիմը աւարտվելուց յետոյ:

— Ո՛հ, յայտնի բան է պարոն, ես նորան ուղիղ սրտով էի ծեծում, ասաց Սամբօն ինքնաբաւական կերպով:

— Իսկ ես, ասաց Կվիմբօն մի նախանձոտ հայեացք ձգելով Սամբօնի վերայ, ես սաստիկ ուժով հարուած էի տալիս զլիին:

— Լաւ, պատասխանեց Լեզրին վայրենի ուրախութեամբ: Եետոյ մի բոպէ մատածելուց յետոյ, աւելացրեց նա, սպառնալի

հայեացք ձգելով իւր երկու դահիճների վերայ, բայց եթէ նա մեռնի այդ պատժից, որը վերջինը չէ լինելու, ինչպէս ևս ձեզ պատուիրել եմ, այն ժամանակ դուք երկուսդէլ կ'հետեւէք նորան դէպի խլուրդների աշխարհը:

— Դուք միշտ կատակ էք անում, պարոն, ասացին դահիճները, ծիծաղելով այս հանաքի վերայ, թէև սրտի խորքում ամենեին ուրախութիւն չէին զգում նորա սրախօսութիւնից:

— Ահա, առեք, աւելացրեց Լեզրին, տալով նորանց մի ամանով օղի. հերթով խմեցէք, ամեն աշխատանք արժանի է վարձատրութեան:

— Մորանք շուտով դատարկեցին օղիի ամանը, որը ամբողջ օրը պահպանեց նորանց ուրախութիւնը:

Մի շաբաթ ակամայ անգործութիւնից յետոյ թովմաս եղայրը առողջացաւ, բայց շուտով կրկին ենթարկուեցաւ փորձանքի: Երկու կանայք փախան Լեզրիի ազարակից: Լեզրին ամեն տեսակ միջոց գործ գրեց նորանց գտնելու համար—ուղարկեց դէպի ամեն կողմ իւր մարդկերանց համարեա՛ կէսը, մինչեւ անգամ արձակեց քաղցած շների մի խումբ, որոնց պահում էր միայն փախչող գերիներ որսալու համար, բայց նորա բոլոր ջանքը իղուր անցաւ:

Յանկարծ մի սարսափելի միտք ծագեց նորա մէջ:

— Այս ամենի պատճառը անպիտան թովմասն է, աղաղակեց նա, կրակներ թափելով աչքերից: Նա իւր սրտում ծիծաղում է վշտիս վերայ.— Հա՛, նա ծիծաղում է վերաս, աւելացրեց նա վեր թռչելով տեղից, լաւ ուրեմն. եթէ որ տասն անգամ աւելի արժէք ունենալու լինէր, ես դարձեալ կ'սպանեմ նորան, եթէ չ'պատմէ, թէ ուր փախան կանայքը:

— Թովմաս, գոչեց նա, մօտենալով նեղրին, գիտես, որ ես վըճ-  
ռեցի քեզ սպանել:

— Շատ կարելի է, պատասխանեց Թովմասը հանդարտ կերպով:

— Զգոյշ եղիր, շարունակեց Լեղրին, այս գիտաւորութիւնը  
վՃռած է, այս վՃիռը անդառնալի է, ես դորան կ'փոխեմ միայն  
մի պայմանով, եթէ կասես ինձ թէ ուր փախան գերիներս:

Թովմասը ոչինչ չպատասխանեց:

— Հասկանում ես ինձ, աղաղակեց Լեղրին, ոտքերը գետնին  
խփելով:

— Չեմ կարող պատասխանել այդ հարցին, պատասխանեց ծա-  
նըր ու վՃռողաբար Թովմասը:

— Դեռ ևս համարձակվում ես հաւատացնել ինձ, թէ ոչինչ  
չգիտես, պառաւ սև քրիստոնեայ, գոչեց Լեղրին առաջները  
կրծտացնելով:

Թովմասը լռում էր:

— Ասա իսկոյն, գոչեց Լեղրին, մի բան գիտե՞ս նորանց փա-  
խուստի մասին:

— Պիտեմ, պարոն, բայց ասել ոչինչ չեմ կարող ես միայն  
մեռնել կարող եմ:

— Ուրեմն կ'մեռնես:

Թովմասը բարձրացրեց աչքերը Լեղրիի վերայ:

— Եթէ դուք տկար լինեիք, կամ տանջվում լինեիք ես  
կարողանայի փրկել ձեզ, ես առի սրտե պատրաստ էի արիւնս չ'լինայել  
ձեզ համար. եթէ կաթիլ կաթիլ հարկաւոր լիներ արիւնս քամել  
ձեր աղատութեան համար, ես մեծ ուրախութեամբ կ'տայի: Ո՛հ,  
մի' դնէք այդչափ սարսափելի մեղք ձեր հոգւոյ վերայ, դուք դո-

րանով աւելի ձեզ կ'մնասէք, քան թէ ինձ որքան էլ ծանր լինեն  
իմ չարչարանքները, շուտով կանցնեն, իսկ եթէ դուք չ'զղաք, ձեր  
չարչարանքները անվերջ կ'լինեն:

Այս խօսքերը միայն այն ներգործութիւնն ունեցան, որ Լե-  
ղրիին մի բոպէ շատ զարմացրին ու դադարեցրին նորա կատաղու-  
թիւնը. բայց դա մի բոպէական անվստահութիւն էր. նորա չարու-  
թիւնը աւելի կատաղի կերպով նորոգուեցաւ: Բարկութիւնից գունա-  
թափուած, կատաղած Լեղրին յարձակուեցաւ նեղրի վերայ ու  
գետին գլորեց նորան:

— Ամբո, կվիմբօ, գոռաց նա:

Սամբօն ու կվիմբօն եկան:

Թովմասի զարմանալի համբերութիւնը մի փոքր շփոթեց նո-  
րանց և մեղմացրեց իւր դահիճների կատաղութիւնը:

— Նա համարեա մեռաւ, ասաց անհամարձակ Սամբօն:

Թովմասը բացեց աչքերը:

— Խեղճ ու թշուառ էակ, ասաց նա նայելով Լեղրիի վերայ.  
դուք արդէն ամեն բան վերջացրիք ինձ հետ....իսկ ես առի սրտէ  
ներում եմ ձեզ:

Եւ գերիի աչքերը փակուեցան. կարելի էր կարծել որ նա մեռաւ:

— Վերջապէս, ասաց Լեղրին մօտենալով ստրուկին, այս ան-  
գամնա արդէն մեռաւ, և հեռացաւ նորա մօտից: Թովմասը գեռ  
չէր մեռել:

Տանջանքների ժամանակ նորա խուլ աղօթքները աղդեցին  
զահիճների սրտին և Լեղրիի գնալուց յետոյ Սամբօն և կվիմբօն,  
լուանալով իւրեանց զօհի վերքերը և բամբակի մնացորդներից շուտով  
անկողին պատրաստելուց յետոյ, պառկացրին նորա վերայ Թովմասին:

— Ո՛հ, Թովմաս, մենք քեզ հետ անարդար վարուեցանք,  
ասաց կվիմբօն:

— Երում եմ ձեզ ուղեղ սրտով, ասաց Թովմասը թոյլ ձայնով:

— Ո՛հ, Թովմաս, բայց ո՞վէ Յիսուսը, միթէ դու նորան միշտ  
մօտդ ես տեսնում:

Քրիստոնեայ նեգրի հոգին նորից կենդանութիւն ստացաւ. մի  
քանի խօսքերով նա նկարագրեց Քրիչի կեանքը:

Երկու դահիճներն էլ լսց էին լինում:

— Առաջ այդ մասին ես ոչինչ չգիտէի, բայց հաւատում եմ,  
չեմ կարող չհաւատալ:

— Յիսուսը կողորմի մեզ:

— Թշուառ էակներ, ասաց Թովմասը, ես շատ ուրախ կ'լինեմ  
իմ կրած չարչարանքներիս համար, եթէ միայն կ'կարողանամ ձեզ  
դէպի Յիսուսը դարձնել: Ո՛հ, Տէր, աղաչում եմ Քեզ, շնորհիր ինձ  
այս երկու հոգին:

Այս անցքից Երկու օր անցած՝ դէպի Լեգրիի տունը տանող  
Ճեմելիքով մի երիտասարդ թեթև կառքի մէջ նստած արագութեամբ  
մօտեցաւ դռներին. նա ցած եկաւ կառքից, բաց թողեց սանձերը  
և հարցրեց թէ որտեղ է կալուածատէրը:

Աս Գէորգ Շելքին էր:

Լեգրին նորան տհաճութեամբ լնդունեց:

— Ես լսեցի, որ դուք Նոր—Օրէանում Թովմաս անունով մի  
նեգր էք գնել, ասաց նա. մի ժամանակ նա իմ հօր մօտ էր կենում,  
այժմ ես եկել եմ նորան յետ գնելու զիտաւորութեամբ:

— Ես այնտեղ պառկած է շտեմարանում, ասաց մի երեխայ,  
որ բռնած ունէր Գէորգի ձիու սանձերը:

Այդ միջոցին Լեգրին, հայհոյանքներ արձակելով բերանից,  
ոտքով մի կողմ բոթեց երեխային, իսկ Գէորգը իսկոյն շտապեց  
դէպի շտեմարանը:

— Այս ի՞նչ եմ տեսնում, Թովմաս եղբայր, թշուառ բարեկամն,  
իմ հին բարեկամն, ասաց Գէորգը Տնկների վերայ ընկնելով մեռնողի  
անկողնի մօտ:

Գէորգի ձայնը թափանցեց մեռնողի սրտի մէջ, գլուխը մի  
փոքր շարժելով, ժպտաց Թովմասը և ասաց թոյլ ձայնով.

— Երբ Յիսուսը մերձենում է մահիճին, մահիճը դառնում է  
փափուկ, ինչպէս աղուամազ:

Աղե արցունք էր թափում Գէորգը իւր թշուառ բարեկամի  
վերայ գլուխը խոնարհած:

— Ո՛հ, զարթիր, սիրելի Թովմաս, մի անգամ էլ խօսիր, ասում  
էր նա, բաց աչքերդ, ես եմ—Գէորգը, քո սիրելի փոքր Գէորգը,  
չես ձանաչում ինձ:

— Պարոն Գէորգ, արտարերեց Թովմասը թոյլ ձայնով ու կամաց  
աչքերը բաց անելով, պարո՞ն Գէորգ, կրկնեց նա ցնորուածի նման:

Երկար ժամանակ հարկաւոր եղաւ մինչև Թովմասը սթափուե-  
ցաւ. նորա միաքը պարզուեցաւ, և Գէորգի անունը լսելով, նորա  
մոլորուած հայեացքը պայծառացաւ: Խեղձը ձեռքերը խաչեց և  
նորա աչքերը լցուեցան արտասուքով:

— Տէր, փառք Քեզ, սա էր իմ ցանկութիւնը, ասաց նա,  
Շելքին չէ մոռացել ինձ, սա է ջերմացնում սիրտս, միսիթարում  
հոգիս, այսուհետև հանգիստ կ'մեռնեմ, շնորհակալ եմ, Տէր, քեզա-  
նից: Ո՛հ, հոգիս:

— Ո՛չ, դու չես մեռնի, ես չեմ ուզում որ դու մեռնես, կամ

մինչև անգամ մտածես մահուան վերայ, ես եկել եմ քեզ յետ գնելու և տանելու, ասում էր Գէորդը կարեկցութեամբ:


—Ո՛հ, դուք ուշացաք, պարսն Գէորդ, Յիսուսն արդէն գնեց ինձ և ես փափաղում եմ մտնել նորա բնակարանը. ես շատ եմ շտապում այնտեղ գնալ, երկնքում աւելի լաւ է, քան թէ Կենտուկիում:

—Ո՛հ, մի՛ մեռիր, դա ինձ կ'սպանէ, սիրտս կտրատվում է քո կրած տանջանքները երեակայելիս. դու երկու օր շարունակ պառկած էիր այս հոտած ու խոնաւ շտեմարանում, թշուառ, թշուառ բարեկամն:

—Ո՛հ, ինձ այդպէս մի՛ անուսնէք, ասաց Թովմասը հանդիսաւոր կերպով. յիրաւի, մի ժամանակ թշուառ էի, բայց այդ անցաւ, ես այժմ փառաց գոների մօտն եմ կանգնած, երկինքը մօտ է. Թովմասը տարաւ յաղթութիւնը, որը ինքը Յիսուսը ուղարկեց նորան, Թող օրհնած լինի նորա անունը:

Գէորդը լուս ու անշարժ կանգնած էր իւր վաղեմի բարեկամի մօտ և խորին յարգութեամբ նայում էր նորա վերայ: Թովմասը, բռնելով Գէորդի ձեռքը, ասաց.

—Ոչինչ պէտք չէ յայտնել Քլյէին. խեղճ Քլյէ, դա նորա համար մահու հարուած կ'լինի. ասացէք նորան, որ ինձ փառաց ձանապարհի վերայ տեսաք, որ ես այս աշխարհում այլ ևս ոչոքի համար չեմ կարող մնալ, և որ Տէրը միշտ ու ամեն տեղ ինձ մօտ էր ու թեթևացնում էր ցաւերս....բայց, խեղճ որդիքս, օրօրոցի մէջ թողած խեղճ մանուկս: Երբեմն որ նորանց յիշում էի, սիրտս կտոր կտոր էր լինում. ասացէք նորանց ամենքին, որ հետեւն ինձ, ողջունեցէք իմ կողմից պարոնիս, բարի և սիրելի տիկնոջը և աղա-



Այս ինչ եմ տեսնում, Թովմաս եղայր, թշուառ բարեկամն, իմ հին բարեկամն:

բակի բոլոր բանուորներին: Նս միշտ և ամեն տեղ սիրում էի բոլոր  
արարածներին....բոլորը սէր էր ինձ համար: Ո՛չ, պարոն Գէորգ,  
մեծ բան է քրիստոնեայ լինելը:

Միքանի բոսկէից յետոյ խեղճ Թովմասը մեռաւ:  
Երիտասարդը Լեզրիից ինդրեց Թովմասի դիակը, թաղեց նորան  
և գերեզմանի մօտ չոգելով, ձեռքերը դէպի երկինքը բարձրացրեց և  
բարձր ձայնով գոչեց.

—Վ կայ եմ կանչում Քեզ, Տէր-Աստուած, որ կ'ոչնչացնեմ  
այս երկրում նեզիների սորկութիւնը:

Այս սարսափելի անցքից մի ամիս յետոյ, ձմեռուայ մուժ գի-  
շերներից մէկում, պարոն Շելքի գաւթում կառքի անիւների ձայն  
լսուեցաւ:

—Պարոն Գէորգը, բացականչեց Քլոյէն, վաղելով դէպի պատուհանը:  
Տիկին Շելքին շտապեց դէպի դուռը. դրան մօտ հանդիպեց  
իւր որդուն և զրկախառնեց նորան: Քլոյէն անշարժ կանքնած՝  
աշխատում էր զիշերուայ մթութեան մէջ մի բան տեսնել:

—Ո՛չ, խեղճ Քլոյէ, ասաց Գէորգը, մօտենալով նորան և  
ցաւակցութեամբ ձեռք մէկնելով. Ես կ'զօհէի իմ բոլոր հարստու-  
թիւնը, եթէ կարողանայի նորան այստեղ բերել բայց նա հեռա-  
ցաւ, նա տեղափխուեց դէպի աւելի լաւ աշխարհ:

Տիկին Շելքին Ճիչ բարձրացրեց. Քլոյէն մի խօսք չկարողա-  
ցաւ արտասանել: Նոքա մտան հիւրասենեակը: Այնտեղ սեղանի  
վերայ զրած էր մի նշանաւոր գումար, որ Քլոյէն հաւաքել էր իւր  
ամուսնուն ազատելու համար: Նա վերցրեց այն փողերը և,  
տալով տիրուհուն, ասաց:

—Ես էլ չեմ ուզում տեսնել այդ փողերը և ոչ լսել դորանց

մասին. Ես վաղուց գիտեի, որ այսպէս կ'լինէր նորա վերջը—ծառ  
խուել ու չարչարուել այս հին ագարակներում:

**Վերջացնելով** խօսքը, Քլոյէն հպարտութեամբ դէպի  
դուռը գնաց:

— Խեղճ, իմ բարի Քլոյէ, ասաց տիկին Շելքին, հետևելով նորան  
և հանդարտութեամբ նստացնելով աթոռի վերայ, որի մօտը ինքն  
էլ նստեց:

Քլոյէն գլուխը կախած իւր տիրուհու ուսի վերայ, սկսեց ողբալ:  
— Ո՛չ, ներեցէք տիկին, ասաց նա, սիրտս կտոր կտոր է լինում  
— Գիտեմ... պատասխանեց տիկին Շելքին: աղի արցունք թա-  
փելով:

Տիրեց խորին լռութիւն. լաց էին լինում ամենքը. վերջապէս  
Գէորգը նստեց խեղճ այրի կնոջ կողքին ու սրտառուչ պարզու-  
թեամբ պատմեց նորան ամուսնոյ կրած չարչարանքները և կրկնեց  
թովմասի վերջին հեղ խօսքերը:

Մի ամիս անցած այս անցքից յետոյ՝ առաւտեան Շելքի  
գերիները կանչուած էին մեծ սրահը երիտասարդ պարոնի ասած-  
ները լսելու, որը հօր մահուանից յետոյ ինքն էր ժառանգութիւն  
ստացել և ուղում էր ասել գերիներին նրանց վերաբերեալ մի նո-  
րութիւն:

Գէորգը զուրս եկաւ սրահը թղթերի մի կապոց ձեռքին.  
սրանք արձակման թղթերն էին և բաժանեց գերիներին, առաջուց  
կարդալով նրանց բովանդակութիւնը:

Ամենքը միաձայն յայտնեցին իրանց ուրախութիւնն ու շնոր-  
հակալութիւնը. շատերը նրանցից յետ գարձրին իրանց արձակման  
թղթերը, պաշարելով նորան արցունքներով ու աղաչանքով:

— Անք չենք ուղում ձեր տուած աղատութիւնը, ասում էին  
նորանք. մենք միշտ ունեցել ենք մեր ամեն պիտոյքները, մենք չենք  
ուղում թողնել ոչ այս հին տունը, ոչ մեր պարոնին, ոչ մեր տի-  
րուհուն; մի խօսքով մենք չենք հեռանայ այստեղից:

**Այս** սրտաշարժ տեսարանից յետոյ, Գէորգը առաջ եկաւ  
սրահի մէջ տեղը և ասաց.

— Դառն է ինձ համար ձեղանից բաժանուել, բարի բարե-  
կամներս. մեր ագարակին հարկաւոր են նոյնքան մարդիկ, որքան  
հարկաւոր էին ձեր արձակմանից առաջ. իսկ այժմ դուք ամենքդ—  
ծերե՛ր, մանուկնե՛ր, կանայք և տղամարդիք—ամենքդ ազատ էք:  
Նս ձեզ կ'վճարեմ ձեր աշխատանքի վարձը, որի համար մենք պայ-  
ման կ'կապենք: Ես օգուտ կ'քաղեմ կալուածքից և յուսով եմ ձեր  
մէջ գտնել բարեկամութիւն և աշխատափրութիւն: Այժմ, սիրելի-  
ներ, բարձրացրէք ձեր աչքերը դէպի երկինքը և փառաբանեցէք  
Տիրոջը: Գարձեալ մի խօսք, աւելացրեց նա փոքր լռութիւնից յե-  
տոյ. ամե՞նքդ յիշում էք մեր բարի Թովմաս եղբօրը:

— Ո՛չ, այո՛, յիշում ենք, ասացին միաձայն ամենքը:

**Այն** ժամանակ Գէորգը կարձառօտ պատմեց նորանց Թովմասի  
մահը և յայտնեց նորա հրաժարական ողջոյնը, որ նա ուղարկել  
էր իւր հին բարեկամներին:

— Անցէք, բարեկամներ, այս արժանաւոր նահատակի գերեզ-  
մանի վերայ երդուեցի երբէք չունենալ գերիներ իմ ագարակի մէջ:  
Այն ժամանակ, երբ դուք կ'վայելէք ձեր ստացած աղատութիւնը,  
մտաբերեցէք, որ դորանով պարագան էք նորա բարի սրտին, իսկ  
նորա բարեկամութիւնը փոխադրեցէք նորա կնոջ և որդկերանց  
վերայ: Ամեն անգամ երբ կ'նայէք Թովմաս եղբօր տնակին, մտաբե-

ըեցէք, որ այն բարի և ջերմեռանդ քրիստոնեան այդ տնակի մէջ է անցկացրել այնքան երեկոներ միշտ ձեզանով շրջապատուած; Խեղճ, ողորմելի Թովմաս: Գտնուեցան մարդիք, որոնք չ'գնահաւաեցին քեզ և դու նահատակուեցար քո հաւատարմութեան համար: Գոնեա՝ այժմ կ'հանդարտուեն քո ոսկորները. քո մահովս դու ազատեցիր ուրիշներին:

ՏԻԿԻՆ ՊԱԼՄԵՐ. Մեր պատմութիւնը այստեղ կ'վերջանար, եթէ որ չ'յիշէինք խեղճ էլիզային և նորա որդի Հենրիկոսին: Անկասկած, իմ սիրելի որդիք, դուք մեծ ուրախութեամբ կիմանաք, որ այս անձնատուր մայրը շատ անյաջողութիւններից ու վտանգներից յետոյ, միացաւ իւր ամուսնու հետ, որը մինչև նոցա գտնելը նշնպէս շատ վտանգների էր ենթարկուել: Այս գերդաստանը մըշտապէս կանագայի մէջ բնակուեցաւ:



**ԽՆԴՐՈՒՄ ԷՆՔ առանձին ուշադրութիւն դարձնել  
չետևեալ սխալների վերայ.**

ԷՐԵԱ.	ՊԱՇ.	ՊԻԱԼ.	Ա-ՀԵՂ.
6	3	Ֆրեդրիկօսին	Ֆէրդինանդին
»	8	Նահանդ	գաւառ
»	9	գաւառեց	նահանդեց
17	17	ասպանեակը,	ասպանեակը բռնելով,
30	14	առատ	առատաձեռն
31	16	լոմիր,	լոմիր,
37	15	Շէլքին,	Աէն կէլքը,
57	25	գառնութօամը	գառնութեամը
80	10	անձնասոսուր	անձնուելը

ԱՅՍԱԿԱՆ-ՀԱՆՐԱԵԼ  
 Հ. Հ.  
 ԽՈՎՃԱՐ ՄԱԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԿԱՐԱՔ  
 ԽՈՎՃԱՐ ՊՐԵՄԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԿԱՐԱՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԿԱՐԱՔ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՐԵՄԻԱՆ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԿԱՐԱՔ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՐԵՄԻԱՆ
Արքական պատուհան	Արքական պատուհան	6	8
Առաջարկ	Առաջարկ	8	6
Արքական պատուհան	Արքական պատուհան	6	6
Խովճար պատուհան	Խովճար պատուհան	11	11
Առաջարկագույն	Առաջարկագույն	41	48
Առաջարկ	Առաջարկ	81	19
Խովճար պատուհան	Խովճար պատուհան	61	72
Խովճար պատուհան	Խովճար պատուհան	82	78
Առաջարկ	Առաջարկ	91	98

ՀՀ Ազգային գրադարան



NL0376617

443



825



ԳԵՍՆ Է 60 ԿՈՊ.

825  
P-67